

**Սուրբ Գրքի
Բառային Ներշնչումը
Գիտականորեն Ապացուցված**

**«Տիրոջ խոսքերը մաքուր խոսքեր են. հողե բովբի մեջ գտված, յոթ անգամ մաքրված
արծաթի պես են»:**

Սաղմոս 12.6

Յեղիակ

Մ.Յ. Պողոսյան

Տպագր. Ճիգմենճյան

Հալեպ, Սիրիա

1946

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը գրված է՝ ցույց տալու համար, որ Սբ. Գիրքն Աստծո խոսքն է՝ բառ առ բառ Աստծուց ելած:

Շատերն են հավատում նրա՝ Աստծո խոսքը լինելուն, սակայն ի՞նչ առումով:

Այս գիրքը գալիս է՝ ցույց տալու, որ ամբողջ Սբ. Գիրքն այնքանով է Աստծո խոսքը, որքանով այլակերպության լեռան վրա երկնքից հնչած հետևյալ խոսքերը. «Սա է Իմ սիրելի Որդին, որին ես հավանել եմ. Նրան լսեք» (Մատթ. 17.5):

Սա հաստատելու համար արտակարգ մի փաստ, անառարկելի, անհերքելի և շատ զորավոր մի ապացույց է ներկայացնում այս գիրքը, որի պարունակությունը մեծ մասամբ ամփոփումն ու թարգմանությունն է անգլերենսոց *New Discoveries*» («Նոր զարմանալի հայտնագործություններ»)* վերնագրով գրքի, որը տակավին անծանոթ է շատերին:

Այստեղ ներկայացված փաստերն իմանալը և Սբ. Գիրքն այսպես ընդունելը մեր մեջ ավելի մեծ և անկեղծ սեր, խորին հարգանք, լրջմիտ երկյուղածություն և կատարյալ հնազանդություն կառաջացնեն, որոնք կհեղաշրջեն մեր կյանքը:

(*) Նրանք, ովքեր փափագում են ունենալ այս անգլերեն գիրքը, կարող են դիմել հետևյալ հասցեով՝

ASTOUNDING NEW DISCOVERIES

BY Kari C. Sabiers M. A.

Care of Rabertson Publishiong Co.

539 Glendale Bivd. Los Angeles, Calif U.S.A.

Այս է մեր փափագն ու աղոթքը. թող Տերը մեր աչքերը բացի՝ տեսնելու Սբ. Գրքի հրաշալի գեղեցկությունը, և մեզ շնորհք տա, որ նրա հետ թեթևամտորեն չվարվենք ու դրա պատճառով հանցավոր չգտնվենք այս գրքի և նրա մեծ հեղինակի հանդեպ:

Այս փափագով և աղոթքով Ձեր խոնարհ եղբայր՝

Մինաս Պոզոգյան, Հալեպ

ԳԼՈՒԽ Ա

ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ԲԱՌԱՅԻՆ ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԿԱՆ

Սբ. Գիրքն Աստծո խոսքն է՝ Աստծո բերանից ելած: Նրա ամբողջությունը՝ Ծննդոց գրքի սկզբից մինչև Հայտնության գրքի վերջը, Աստծո՞ւց է:

Քրիստոսի եկեղեցին և մեր հայրերը, առանց վարանումների, «այո» ասացին այս հարցմանը: Նրանք այս հավատքով ապրեցին, այսպես սովորեցին և այս հավատքով էլ ննջեցին: Սա են վկայում մեր եկեղեցական հայրերի՝ Նիկիական հանգանակում (ուղերձում) գրված հետևյալ տողերը. «Հավատամք և ի Սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն որ խոսեցավ յորենս և ի Մարգարես և յավետարանս»:

Մեր եկեղեցական հայրերը հավատում էին, որ ամբողջ Սբ. Գրքում խոսողը Սուրբ Հոգին է: Գրողները մարդիկ էին, բայց խոսողը Սուրբ Հոգին էր: Մեր հայրերը հաստատ մնացին այս հավատքի մեջ: Սակայն խնդիրն այժմ փոխված է: Մենք առաքյալի կանխագուշակած չար ժամանակներում ենք ապրում: Արդիականությունը և Սբ. Գրքի քննադատությունը [*] մեծապես շփոթեցրել և պղտորել են բազում մտքեր: Այս պատճառով քրիստոնեական եկեղեցին ստիպված է կրկին ներկայացնելու իր գորավոր և ջախջախիչ ապացույցները և պաշտպանելու իր դարավոր հավատքը՝ հերքելով բոլոր օտար նորահնար և կործանարար ուսուցումները:

Հայտնի է, որ սատանան՝ Աստծո գործի և Ավետարանի ահավոր թշնամին, բավական չհամարելով մարդկանց բազմատեսակ մեղքերի ճահճի մեջ գցելը, ձեռնարկել է սարսափելի խորամանկությամբ խեղաթյուրել մեր հավատքի հիմնական ճշմարտությունները: Նա քաջ գիտի մարգարեի ասածը. «Թե որ հիմքերը քանդվեն, արդարն ի՞նչ անի» (Սաղմ. 11.3): Ուստի ջանում է հիմքերը կործանել, որպեսզի մարդիկ, նույնիսկ արդարները, շփոթության մատնվեն: Նա ջանում է Աստծո սուրբ խոսքը և Ավետարանը խլել մարդկանց ձեռքից: Ահա, այս նպատակով էլ դրդում է շատերին, որ Սբ. Գիրքը չընդունեն իբրև Աստծո խոսք, ոչ էլ հավատան նրա անսխալականությանը:

Սբ. Գիրքը ճիշտ իմանալը հույժ կարևոր խնդիր է: Արժե, որ յուրաքանչյուր անհատ այն լուրջ խորհրդածության նյութ դարձնի: Հոգևոր աշխարհում սա կենաց և մահու խնդիր է: Երբ ասվում է, որ Սբ. Գիրքը, թեև մարդկանց ձեռքով է գրված, բայց տակավին Աստծո խոսքն է՝ բառ առ բառ Աստծո բերանից ելած, հետևաբար՝ զերծ ամեն տեսակի սխալներից, շատերի մտքում ծագում է այն հարցը, թե բավականաչափ համոզիչ փաստեր կա՞ն դա ապացուցելու համար: Անշուշտ՝ կան, և յուրաքանչյուր անկողմնակալ, աննախապաշար, ճշմարտասեր անհատ, երբ դրանք քննի, ստիպված կլինի առանց զարմանալու ընդունել: Այդ ապացույցներից մի քանիսն այստեղ կնշենք: Դրանք ընդարձակ նյութեր են, և յուրաքանչյուրի մասին հատորներ են գրված և դեռ գրվում էլ են:

Ա. – Սբ. Գրքի՝ իր մասին արված վկայությունը, որ տեսնում ենք նրա էջերում.

«Տերը կասի», «Տիրոջ խոսքը», «Այսպես է ասում Տերը, Չորաց Աստվածը», «Տերը խոսեց և ասաց» և սրանց նման ուրիշ արտահայտություններ ավելի, քան 2500 անգամ գրված են Սբ. Գրքում:

[*] Այս քննադատությունը ոչ այլ ինչ է, քան մեղավոր և կործանվող մարդկանց կողմից Աստծո հոսքի քննադատություն, այն բանի փոխարեն, որ թույլ տային՝ հոսքն իրենց քննադատեր և Փրկչի մոտ առաջնորդեր ու փրկեր:

Սրանք գրողները սուրբ մարդիկ էին և գիտեին, թե ինչ են գրում: Մի՞թե նրանք կհամարձակվեին այդպես ասել, եթե Տերը չէր խոսել, այլ իրենց գլխից էին գրել:

Բ. – Տեր Հիսուս Զրիստոսի վկայությունը.

Տեր Հիսուսը գիտեր ամեն ինչ՝ անցյալը, ներկան և ապագան: Նա ասաց, որ հնքն է ճշմարտությունը, և ինչ որ խոսում է, հնքը չէ, այլ Հայրը, որ իր մեջ է բնակվում: Նա կարտահայտվե՞ր Հին ուխտի մասին այնպես, ինչպես արտահայտվեց, եթե այն ամբողջությամբ Սուրբ Հոգուց ներշնչված չլիներ:

Ինչո՞ւ է Նա հրեաներին իրենց ավանդություններին հետևելու և ուրիշ սխալների համար սաստիկ հանդիմանելու ժամանակ Սբ. Գիրքը բարձրացնում և ասում. «... կարելի չէ, որ գիրքը ավերվի» (Հովհ. 10.35):

Սուրբ Հոգով լցված առաքյալներն էլ ինչպիսի՜ հարգանքով են խոսում Հին ուխտի մասին, երբ հղումներ են անում այնտեղից:

Երբ արևը ծագում է, բոլոր լույսերը խավարում և մարում են, նույնպես էլ, երբ Տեր Հիսուսը խոսում ու վկայում է Սբ. Գրքի մասին, Նրա բացարձակ ճշմարտության առջև ամեն լեզու պետք է դադարի խոսելուց ու լռի հավիտյան: Տեր Հիսուսի վկայությունը պետք է այսպես վերջ դնի ամեն վիճաբանության:

Գ. – Կատարված բազմաթիվ մարգարեությունների վկայությունը.

Սբ. Գիրքը մարգարեություններով լի է: Դրանց մի մասը կատարվել է անցյալում, մյուս մասը կատարվում է այսօր մեր աչքի առջև, իսկ մնացածը դեռ պետք է կատարվի, երբ ժամանակը գա: Այդ մարգարեությունները ոչ մի մարդ չէր կարող խոսել դարեր առաջ, եթե Սուրբ Հոգին այդ խոսքերը նրանց բերանում դրած չլիներ, քանի որ դրանք բառ առ բառ կատարվեցին և կատարվում են:

Դ. – Սբ. Գրքի գիտական ճշգրտությունը.

Սբ. Գիրքը գրողները գիտության մարդիկ չէին, ոչ էլ այդ գիրքը գիտություն սովորեցնելու նպատակով էին գրում: Սակայն ինչպե՞ս կարողացան գրել գիտությանն առնչվող մի շարք բառեր, որոնց ճշմարտացիությունը աշխարհի գիտնականները կարողացան հասկանալ միայն այսօրվա դարեր հետո:

Այսօր պարզել են, որ իրական գիտությունը և Սբ. Գիրքը կատարյալ համաձայնություն ունեն իրար հետ:

Ե. – Սբ. Գրքի զարմանալի մեկնությունը.

Քառասունի չափ մարդիկ, լինելով տարբեր երկրներից և դասակարգերից, 1600 տարվա ընթացքում գրել են մի գիրք, որի մեջ ոչ մի հակասություն կամ ընդդիմություն գոյություն չունի, ընդհակառակը, մեկի գրածը լրացնում է մյուսին, և բոլորը միանալով՝ մեկ կատարյալ գիրք են կազմում: Սա ինչպե՞ս կարող էր լինել, եթե այս գրքի բուն հեղինակը միայն մեկ անձնավորություն, այսինքն՝ Սուրբ Հոգին չլիներ:

Զ. – Նրա անկորչելիությունը և անջնջելիությունը.

Ոչ մի գիրք Սբ. Գրքի չափ հակառակորդներ չի ունեցել և նրա չափ հալածանքների չի ենթարկվել, սակայն նա բոլորին հաղթել է և այսօր էլ պահպանում է իր պատկառելի վեհափառությունը: Այս գիրքը ներկայումս հազարից ավելի լեզուներով թարգմանված է և ամեն տարի միլիոնավոր տպաքանակներով սպառում ունի: Ի՞նչն է այս հաղթության գաղտնիքը:

Սբ. Գիրքը կենդանի և Ամենակարող Աստծո խոսքն է, որ հավիտյան կմնա. Աստված Ինքն է պաշտպանում իր խոսքը:

Է. – Նրա հեղափոխող և սուրբ ազդեցությունը.

Սա ևս մեկ ապացույց է, որ Սբ. Գիրքը մարդկային գիրք չէ, այլ Աստծո Գիրքն է՝ տրված մարդկանց:

Որքան մարդիկ՝ մեղքի տիղմի մեջ թավալվող հազարավոր և բյուրավոր պիղծ մեղավորներ, դարձի են եկել և սուրբեր դարձել այս գրքի միջոցով: Ինչո՞ւ, որովհետև սա տիեզերքի Արարչից եկած և օրհնյալ պատգամներ բերող գիրք է: Աստված՝ լինելով միշտ հավատարիմ, հարգում է այնտեղ գրված իր խոստումներն ու օրենքները և միշտ գործում դրանց համեմատ:

Տակավին ուրիշ շատ բաներ կարող ենք հիշել՝ ցույց տալու համար, որ մենք գործ ունենք գերմարդկային և գերբնական միգրքի հետ: Սակայն դրանք թողնելով՝ փափագում ենք ներկայացնել ուրիշ շատ կարևոր մի ապացույց՝ Սբ. Գրքի բառային ներշնչման ապացույցը, որ պետք է իմանա ամեն անհատ, եթե փափագում է ճիշտ գաղափար ունենալ Սբ. Գրքի մասին:

ՆՈՐ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մտավորապես մեկ դար առաջ մի ռուս անհատ Ռուսաստանից Ամերիկա տեղափոխվեց համալսարանում ուսում ստանալու համար: Այնտեղ ուսումն ավարտելուց հետո նա դարձավ եբրայերենի և հունարենի հռչակավոր լեզվագետ և անվանի հրապարակախոս: Նա ելույթներ էր ունենում Ամերիկայի շատ քաղաքներում՝ հազարավոր մարդկանց առջև, և շատերը սիրով ու հարգանքով լսում էին նրա բանախոսությունները: Այդ անձնավորությունը Իվան Պանինն էր:

Որոշ ժամանակ հետո Տիրոջ շնորհքով և Սուրբ Հոգու առաջնորդությամբ նա հոգևոր արթնություն վերապրեց. տեսնելով իր մեղավոր և կորած լինելը՝ նա հասկացավ, որ փրկության միակ միջոցը Աստծո միածին Որդուն՝ Տեր Հիսուս Քրիստոսին հավատալը և Նրան անձնական Փրկիչ ընդունելն է: Այդպիսով, նա դարձավ անկեղծ հավատացյալ, նվիրված և ջերմեռանդ քրիստոնյա:

Մի օր, երբ բնագրի օգնությամբ Սբ. Գիրքն էր կարդում, նրա ուշադրությունը գրավեց մի երևույթ, որն իր մեջ հետաքրքրություն արթնացրեց: Նա տեսավ, որ թե՛ եբրայերեն, թե՛ հունարեն բառերի, ինչպես նաև տառերի և նույնիսկ տառերի թվաբանական արժեքների մեջ մի ծրագիր, հաշիվ և չափ կա, որի նմանը ուրիշ ոչ մի գրքի կամ որևէ լեզվով գրված որևէ գրության մեջ գոյություն չունի:

Նա սկսեց այս ուղղությամբ քննել Սբ. Գիրքը և որքան քննեց, այնքան ավելի զարմանալի բաներ տեսավ: Հասկացավ, որ իր առջև շատ կարևոր մի գործ կա, և ինքն Աստծուց կանչված է այդ գործի համար: Ուստի իր կյանքն ամբողջությամբ այդ գործին նվիրեց: Այս ընդունակ և տաղանդավոր քրիստոնյան 50 տարի շարունակ աշխատեց և դարեր ի վեր Սբ. Գրքում պահված անթիվ զարմանալի գաղտնիքներ լույս աշխարհի հանեց: Նրա ուսումնասիրությունները 40.000 մեծ էջեր են կազմում, որոնք եթե տպվեին, ճիշտ 40 հատոր կարող էին լինել՝ յուրաքանչյուրը 1000 էջից բաղկացած: Նրա բոլոր 40.000 էջանոց ձեռագրերը մնում են պահված:

Մի քանի տարի առաջ Կառլ Կ. Սապիրս անունով մի քրիստոնյա քարոզիչ, գրքերի հեղինակ և շրջիկ ավետարանիչ Իվան Պանինի գրածները երկար և մանրամասն քննելուց հետո «Astounding New Discoveries», այսինքն՝ «Նոր զարմանալի հայտնագործություններ» վերնագրով մի գիրք հրատարակեց, որպեսզի եկեղեցիներին, ժողովրդին և ամբողջ աշխարհին ծանոթացնի Իվան Պանինի ուսումնասիրություններին:

Այդ գիրքը կարդալուց հետո իմ մեջ ցանկություն առաջացավ, նրա պարունակությունը ամփոփելով, ներկայացնել հայ հավատացյալներին և փնտրող-գարգացող դասակարգին պատկանողներին՝ հուսալով, որ դա օգտակար կլինի՝ շատերի աչքերը բացելու, Սբ. Գրքի արժեքն ավելի ընդգծելու և նրա հանդեպ սերն ավելի մեծացնելու, ինչպես նաև արդիականության ախտից վարակված երկու մտքի մեջ կաղացողներին արթնացնելու համար, որպեսզի հասկանան Սբ. Գրքի գերմարդկային բնույթը և իմանան իրենց պատասխանատվությունը:

ԵՐԿՐՈՒ ՀԱՏՎԱԾ «ՆՈՐ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԳՐԷԻՑ

«Nobel Research Foundation» («Նոբել» հետազոտությունների հիմնադրամ) անունով մի կազմակերպություն, որը «Astounding New Discoveries» («Նոր զարմանալի հայտնագործություններ») վերնագրով մի գիրք է հրատարակել, հայտնում է, որ այդ գրքից 100.000 օրինակ տպագրվել և սպառվել է առաջին երեք ամիսների ընթացքում: Պրն. Ալբերտ Նոբելն այդ գրքում հետևյալ առաջարկությունն է արել.

«Հետևյալ էջերում հայտնված զարմանալի երևույթներն արժանի են աստվածաբանների, գիտնականների և աշխարհականների ժամանակին և խորհրդածությանը: Նրանց ընդհանուր կարևորությունն արժանի է բոլորի ուշադրությանը: Նյութը ճշգրտորեն ներկայացված է այստեղ և որևիցե վախ չունի երկար և մանրակրկիտ քննություններից: Ընթերցողից պահանջվում է միայն սեր ճշմարտության հանդեպ և պատրաստակամություն՝ մի կողմ դնելու ամեն նախապաշարում, կանխակալ կարծիք և գրվածը արտակարգ և բաց մտքով ընդունելու»:

Ալբերտ Նոբել

Գրքի առաջին էջում կարդում ենք հետևյալը. «Նոր հայտնաբերված իրողությունները, որոնք «Astounding New Discoveries» («Նոր զարմանալի հայտնագործություններ») գրքի հիմքն են կազմում, գերազանցորեն կարևոր և արտակարգ իմաստալից են: Դրանք իրողություններ են, որոնք յուրաքանչյուր տրամաբանող մարդու ցույց են տալիս, որ Սբ. Գրքի՝ պարզապես մարդկային էակների միջոցով գրված լինելն անկարելի է. դա գերբնական, Աստվածաշունչ և Աստվածատուր գիրք է: Այդ իրողությունները Սբ. Գրքի բառային ներշնչության գիտական և գործնական ապացուցելիությունն են բացահայտում մեր աչքերի առջև: Այսքան կարևոր իրողությունների գյուտը արդարև արժանի է «Նոր զարմանալի հայտնագործություններ» վերնագրով հանդես գալու: Այդ իրողությունները Սբ. Գրքի բնագրի հիմքում թաքնված և հարյուրավոր տարիներ ի վեր խորհրդավոր կերպով պահված են: Դրանք երկու կամ երեք, կամ մի քանի երկտասնյակ թվերով հայտնված երևույթներ չեն: Դրանք հարյուրներով և հազարներով հայտնված բաներ են: Դրանք իրողություններ են, որոնք շփոթության են մատնում և պապանձեցնում բոլոր անհավատներին ու անաստվածներին: Դրանք իրողություններ են, որոնք յուրաքանչյուր ապրող անհատ չի կարող ուրանալ կամ հերքել: Դրանք իրողություններ են, որոնք համոզում են կասկածամիտ և ժամանակակից մտածող մարդկանց՝ ճանաչելու և ընդունելու Սբ. Գրքը որպես գերբնական, աստվածային ու ներշնչված գիրք: Դրանք իրողություններ են, որոնք բոլոր ժամանակների ամենամեծ գյուտերի շարքին պետք է դասել: Ուստի զարմանալի՞ է, որ այսպիսի իրողությունների գյուտը «Նոր զարմանալի հայտնագործություններ» անունով է կոչվում:

ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Այս «Նոր զարմանալի հայտնագործությունները» լավ հասկանալու համար պետք է մի կարևոր բան իմանալ: Հայտնի է, որ Սբ. Գրքը երկու մասից է բաղկացած՝ Հին ուխտ և Նոր կտակարան: Սրանք ի սկզբանե նույն լեզվով գրված չէին: Հին ուխտը գրված էր եբրայերեն, իսկ Նոր կտակարանը՝ հունարեն: «Բնագիր» ասելով՝ պետք է հասկանալ ճիշտ այն լեզուն, որով դրանք գրվել են:

Նոր գյուտերը, որոնց մասին պետք է խոսենք, եբրայերեն և հունարեն բնագրերի մեջ հայտնաբերված իրողություններն են: Դրանք Սբ. Գրքի այլևայլ լեզուներով թարգմանությունների հետ կապ չունեն: Այդ իրողություններն ու երևույթները չեն կարող գտնել թարգմանությունների մեջ: Ինչպես արդեն ասվեց, դրանք խորհրդավոր կերպով թաքնված և պահված են եբրայերեն և հունարեն գրությունների մեջ: Դրանք, առհասարակ, ընթերցողների ուշադրությունը գրավող և շատերի կողմից նկատվող երևույթներ չեն: Հազարավոր մարդիկ Սբ. Գրքի բնագրերը կարդացել են և այդ իրողությունները չեն տեսել, քանի որ դրանք միայն հատուկ քննությունից ու երկար հաշվարկներից հետո կարող են հայտնի լինել:

Հարկ է նշել, որ եբրայերենը 22 տառ ունի, իսկ հունարենը՝ 24: Այս երկու լեզուներում էլ տառերը երկու ձևով են գործածվում. նախ՝ բառեր և նախադասություններ կազմելու նպատակով, ապա՝ իբրև թվանշաններ, քանի որ նրանցում բացակայում են մեր և ուրիշ լեզուներում եղած թվանշանները՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9: Ինչպես հայերենում «Ա» տառը համապատասխանում է 1-ին, «Բ»-ն՝ 2-ին, «Գ»-ն՝ 3-ին, «Ժ»-ն՝ 10-ին, «ԺԱ»-ն՝ 11-ին, «Խ»-ն՝ 40-ին, «Ճ»-ն՝ 100-ին, «ՃՀԳ»-ն՝ 173-ին, «Ռ»-ն՝ 1000-ին, այնպես էլ այս երկու լեզուներում թվանշանները տառերով են ներկայացվում:

Հունարենում «Հիսուս» բառը 6 տառից է կազմված: Այդ 6 տառերի թվային արժեքներն են՝ 10, 8, 200, 70, 400, 200: Եթե այս 6 թվերը գումարենք, գումարը կլինի՝ 888: Հետաքրքրական է, որ սատանայի կամ նեռի թվային արժեքն է՝ 666, ինչպես նշված է Հայտնության 13.18-ում:

Այսպիսով, յուրաքանչյուր եբրայերեն և հունարեն բառ որևէ գաղափարի ծառայելուց բացի, ունի նաև թվային արժեք, նույնը կարելի է ասել և նախադասության մասին: Բառերի թվային արժեքների գումարման արդյունքում ստացվում է տվյալ նախադասության թվային արժեքը:

Օրինակ՝ Հովհաննես 11.35 համարը հայերենում կազմված է 2 բառից՝ «Հիսուսը լացեց», իսկ հունարենում՝ 3 բառից՝ «Էտրակսիեն օ Եիսուս»: Եթե այս բառերի թվային արժեքները գտնենք և գումարենք, կստացվի հետևյալը՝ $785+70+888=1743$: Ինչպես բառը և նախադասությունը թվային արժեք ունեն, այնպես էլ յուրաքանչյուր հատված: Եթե տվյալ հատվածի բոլոր տառերի թվերը գումարվեն, կստացվի այդ հատվածի թվային արժեքը:

ԳԼՈՒԽ Բ

ՅՈՑ ԹԻՎԸ ՍՈՒՐԲ ԳՐԶԻ, ԻՆՉՊԵՍ ԼԱԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սբ. Գրքի և բնության մեջ զարմանալի կանոնավոր ծրագրեր և թվաբանական հաշիվներով կառուցված երևույթներ կան: Սրանք մեզ ցույց են տալիս, որ բնության ստեղծիչը և Սբ. Գրքի հեղինակը միևնույն անձնավորությունն է, քանի որ Աստված (Ում գործերն անքննելի են, և Ում իմաստությունն անսահման է) Սբ. Գրքի և բնության մեջ այնպիսի զարմանալի բաներ, խորհրդավոր ու հիանալի ծրագրեր ունի, որ մարդկանց մտքից շատ բարձր են և դարերի հետազոտություններով կարող են մի փոքր հասկացվել:

Այժմ դիտարկենք Սբ. Գիրքը: Այս գրքում կա մի թիվ՝ 7 թիվը, որ մյուս բոլոր թվերից ավելի շատ է գործածված: Սբ. Գրքի սկզբից մինչև վերջ հաճախ ենք հանդիպում այս թվին: Օրինակ՝ շաբաթը 7 օր է, և 7-րդ օրը հանգստյան օր է որոշված: Եգիպտոսում ճիշտ 7 տարի առատություն և 7 տարի սով եղավ: Երիցովի գրավման ժամանակ 7 քահանաներ, որոնք 7 փողեր ունեին, քաղաքի շուրջը 7 անգամ պտտվեցին: Իսրայելացիների երկրում ամեն 7-րդ տարին երկիրը չափտի ցանվեր: Սողոմոնի տաճարը 7 տարվա ընթացքում շինվեց: Տաճարի շինարարությունից հետո 7 օր տոն կատարեցին: Նեեմանը 7 անգամ լվացվեց Յորդանանի ջրերի մեջ և այդպես մաքրվեց բորոտությունից: Մեր Տերը 7 անգամ խոսեց խաչի վրա:

Հայտնության գրքում նույնպես 7 թիվը հաճախակի է հանդիպում. 7 եկեղեցիներ, 7 հոգիներ, 7 կնիքներ, 7 փողեր, 7 աստղեր, 7 սկավառակներ: Միայն Հայտնության գրքում 7 թիվը երեսուն անգամից ավելի հիշատակված է:

Այժմ դառնանք բնությանը և կյուբական աշխարհին, քանի որ 7 թիվը հաճախ հանդիպում է նաև բնության մեջ: Օրինակ՝ լույսը 7 գույն ունի: Երբ լույսի պարզ ճառագայթը պրիզմայի միջով անցնի, ճիշտ 7 գույներ կտեսնենք: Երաժշտության մեջ ձայնը ճիշտ 7 ամբողջ աստիճաններ ունի՝ ոչ ավելի, ոչ պակաս: Ձայնի յուրաքանչյուր աստիճանի տատանումների և մի աստիճանից մյուսին անցման ժամանակ առաջացած տատանումների թվի մեջ զարմանալի թվաբանական օրենքներ կան: Մարդու մարմինը 7 տարին մեկ ամբողջովին նորոգվում և փոխվում է: Առաջվա մարմնից ոչ մի մասնիկ չի մնում. բոլորը վտարվում են, և նրանց տեղը նորերն են տեղավորվում: 7 տարվա մեջ, ինչպես ասում են գիտնականները, կան հիվանդություններ, որոնց համար 7-րդ, 14-րդ, 21-րդ օրերը ճգնաժամային են: Մարդու զարկերակը դանդաղ է խփում յուրաքանչյուր 7-րդ օրը՝ լինի հիվանդ, թե առողջ: Ֆիզիկական հոգևածությունից առաջացած հիվանդությունների ժամանակ զարկերակի հարվածները փոխվում են ամեն 7-րդ օրը:

Բնության մեջ 7 թվին այլ տեղերում էլ ենք հանդիպում: Օրինակ՝ կնոջ հղիության շրջանը 280 օր է՝ 40x7: Ոչխարների մոտ այդ շրջանը 147 օր է՝ 21x7, առյուծների մոտ՝ 98 օր՝ 14x7, կատուների մոտ՝ 56 օր՝ 8x7: Հավերի թուխս նստելու շրջանը 21 օր է՝ 3x7, բադերինը՝ 28 օր՝ 4x7:

Աստծո թվաբանական օրենքը գործուն է բնության ամեն բնագավառում: Դա տեսնում ենք բուսաբանության, տարրաբանության, աստղագիտության մեջ: Սուրբակների հեռավորության մեջ թվաբանական հաշիվներ և ծրագրեր կան: Ամբողջ տիեզերքում Աստծո թվային դրությունը առհասարակ մեր պատկերացրածից շատ ավելին է: [*]. Աստված բովանդակ արարչության մեծ հաշվապահն է: Ծննդոց 1.16,17, Սաղմոս 147.4, Եսայի 40.12-26 համարներն այս են ցույց տալիս:

Բնության ամեն հատվածը թվաբանական օրենքի կնիքն է կրում: Եթե Աստված երկնքի աստղերը թվաբանական հաշվով իրենց հարմարագույն տեղերն է դրել, եթե չափել է ծովի ջրերը և կշռել լեռները, մի՞թե դժվար և անհավատալի է, որ Իր գրքի բառերը և նույնիսկ տառերը հաշված և ճիշտ հաշվով իրենց տեղերը դրած լիներ: Նա, Ով մեր գլխի մազերը

հաշվել է, մի՞թե չէր կարող իր գրքի բառերը և նույնիսկ տառերը հաշվել և դրանք համրանքով ու թվաբանական հաշվով իրենց տեղերը դնել:

[*] Ասում են, թե հասարակ բանվորը, ով ամեն օր աշխատում է, ամեն աշխատած օրվա ընթացքում իր մարմնից թթվածնի օքսիդ է կորցնում: Գիշերը հանգիստ քնած ժամանակ մեկ օրում կորցրածի հինգ վեցերորդ մասը կարող է վերականգնվել: Այնպես որ, ամեն օր մեկ վեցերորդ մասը պակաս է մնում մարմնի մեջ: Վեց օրվա մեջ կորցրածը վերականգնելու համար պետք է հանգստանալ 7-րդ օրը: Որպեսզի նորից չկորցնի, այլ հանգիստ քնելով՝ ամբողջ շաբաթվա ընթացքում կորցրածը կարողանա վերականգնել: Ուստի 7-րդ օրվա հանգստանալը ոչ միայն Աստծո պատվիրաններից մեկն է, այլ նաև բնության անժխտելի օրենքներից մեկը, որին ստիպված ենք հնազանդվել, եթե ուզում ենք առողջ մարմին ունենալ: Մարդն այսպես է ստեղծված: Այս է պատճառը, թե ինչու անցյալում շաբաթը 7-օրից 10 օր դարձնել ցանկացողները հաջողություն չեն ունեցել:

Հասարակ ձյան փաթիլները, երբ մանրադիտակով դիտենք, դրանց մեջ գեղեցիկ երկրաչափական կանոնավոր ձևեր և որոշակի թվով անկյուններ կտեսնենք: Մի՞թե զարմանալի է, որ այդ հասարակ փաթիլներն ուշադրության արժանացնող Աստված իր գրքի բառերի մեջ գերմարդկային և աննման ձևեր և տիպեր է դրել:

ՆՈՐ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ԶԱՆԻ ՕՐԻՆԱԿ

Սբ. Գրքի եբրայերեն և հունարեն բնագրերի բառերի և նրանց թվային արժեքների մեջ հայտնաբերված յոթերը նոր զարմանալի հայտնագործություններ են, որոնցից մի քանի օրինակներ կբերենք:

Օրինակ 1

Ծննդոց 1.1. «Սկզբում Աստված ստեղծեց երկինքը և երկիրը»:

- (1) Այս համարը եբրայերենում բաղկացած է 7 բառից՝ ոչ ավելի, ոչ պակաս:
- (2) Այդ 7 բառերը եբրայերենում ունեն 28 տառեր, և այդ թիվը բաժանվում է 7-ի կամ հավասար է 4x7-ի:
- (3) Այս համարում երեք կարևոր բառեր կան՝ «Աստված», «երկինք» և «երկիր». այս երեք բառերի թվային արժեքն է 777 կամ 111x7:
- (4) Այս համարում «ստեղծեց» բառը, որը բայ է, ունի 203 թվային արժեք, այսինքն՝ 29x7:
- (5) Այս համարի 7 բառերի յուրաքանչյուր առաջին և վերջին տառերի թվային արժեքների գումարն է 1393, որը կրկին բաժանվում է 7-ի կամ հավասար է 199x7-ի:
- (6) Այս համարի առաջին և վերջին բառերի վերջին տառերի թվային արժեքն է 490 կամ 70x7:
- (7) Այս համարի բոլոր բառերի առաջին, վերջին և միջին տառերի թվային արժեքն է 133 կամ 19x7:

- (8) Այս համարի երեք կարևոր բառերը՝ «Աստված», «երկինք» և «երկիր», կազմված են 14 տառերից, այսինքն՝ 2x7:
- (9) Այս համարում ամենից կարևոր բառը ճիշտ մեջտեղում է գտնվում. ինչպես այդ բառի և նրա ձախ կողմում գտնվող բառի տառերի գումարը, այնպես էլ այդ բառի և նրա աջ կողմում գտնվող բառի տառերի գումարը ստացվում է՝ 7:

Այս համարում դեռ 7 թվի բազում երևույթներ կան, սակայն այսքանը բավական համարելով՝ անցնենք ուրիշ օրինակի:

Օրինակ 2

Մատթեոսի ավետարան 1.1-17: Այս հատվածի նյութը Քրիստոսի ազգաբանությունն է:

- (1) Այս 17 համարների բառապաշարը կազմող բառերի թիվն է 72: Մենք չենք խոսի բոլոր բառերի մասին: «Բառապաշար» ասելով՝ պետք է հասկանալ 72 տարբեր բառեր: Այդ 72 տարբեր բառերի թվային արժեքն է 42.364 կամ 6.052x7:
- (2) Հիշյալ 72 բառերը գրված են 90 ձևերով, այսինքն՝ մի բառը մի անգամ գրված է եզակի թվով, մյուս անգամ՝ հոգնակի, մի անգամ՝ ուղղական հիլովով, մյուս անգամ՝ սեռական և այլն: Այս 90 ձևերի թվային արժեքն է 54.075 կամ 7.725x7:
- (3) Հիշյալ 72 բառերի մեջ գոյականների թիվն է 56 կամ 8x7:
- (4) Նույն հատվածի առաջին 11 համարների բառապաշարը կազմող բառերի թիվն է 49 կամ 7x7:
- (5) Այս 49 բառերի մեջ ձայնավորով սկսվող բառերի ճիշտ քանակն է 28 կամ 4x7:
- (6) Հիշյալ 49 բառերում տառերի թիվն է 266 կամ 38x7:
- (7) Այս 266 հունարեն տառերի մեջ ձայնավոր տառերի թիվն է 140 կամ 20x7, իսկ բաղաձայնների՝ 126 կամ 18x7:
- (8) Հիշյալ 49 հունարեն բառերի մեջ մեկ անգամ գրված բառերի քանակն է 14 կամ 2x7, իսկ մեկ անգամից ավելի գրված բառերինը՝ 35 կամ 5x7:
- (9) Մատթեոս 1.1-11 համարներում 42 գոյականներ կան, որոնց մեջ հատուկ անունների քանակն է 35 կամ 5x7, իսկ հասարակ անուններինը՝ 7:
- (10) Հիշյալ 35 հատուկ անունները նշված են 63 անգամ, այսինքն՝ 9x7:
- (11) Այս 35 հատուկ անունների մեջ արական անձնանունների թիվն է 28 կամ 4x7, իսկ ոչ արական անձնանուններինը՝ 7:
- (12) Այս 28 արական անձնանունները նշված են 56 անգամ, այսինքն՝ 8x7:
- (13) Այս 11 համարներում երեք կանանց անուններ կան՝ Թամար, Ռախաբ, Հռութ: Այս երեք կանանց անուններում հունարեն տառերի քանակն է 14 կամ 2x7:
- (14) Այս համարներում մի քաղաքի անուն է նշված՝ Բաբելոն, որը հունարենում պարունակում է 7 տառ:

Վերոգրյալները նշված հատվածում գոյություն ունեցող բազմաթիվ զարմանալի թվային երևույթներից միայն մի քանիսն են: Այժմ անցնենք մեկ ուրիշ հատվածի:

Օրինակ 3

Մատթեոսի ավետարան 1.18-25. Զրիստոսի ծննդյան պատմությունը:

(1) Այս համարներում կան ճիշտ 161 հունարեն բառեր, այսինքն՝ 23x7:

(2) Այս 161 բառերի թվային արժեքն է 93.394 կամ 13,342x7:

(3) Այս հատվածի բառապաշարը կազմող հունարեն բառերի ճիշտ թիվն է 77 կամ 11x7:

(4) Այս 77 բառերի թվային արժեքն է 51.247 կամ 7,321x7:

(5) Այս հատվածում կան 6 բառեր, որոնք Մատթեոսի ավետարանի այլ հատվածներում չկան: Այս 6 հունարեն բառերի թվային արժեքն է 5.005 կամ 715x7:

(6) Հիշյալ 6 հունարեն բառերում տառերի ճիշտ թիվն է 56 կամ 8x7:

(7) Այս հատվածում կա հունարեն մի բառ «Էմմանուել», որը Նոր կտակարանի այլ հատվածներում չկա: Այս բառի թվային արժեքն է 644 կամ 92x7:

(8) Վերոգրյալ 161 բառերը, որոնցով կազմված է այս հատվածը, գրված են 105 ձևերով, այսինքն՝ 15x7:

(9) Հիշյալ 105 ձևերի թվային արժեքն է 65.429 կամ 9347x7:

(10) Նույն 105 ձևերի մեջ բայերի թիվն է 35 կամ 5x7:

(11) Նույն 105 ձևերի մեջ հատուկ անունների քանակն է 7 կամ 1x7:

(12) Այս 7 հատուկ անուններն ունեն 42 տառեր, այսինքն՝ 6x7:

(13) Այս հատվածում կան ձևեր, որոնք Մատթեոսի ավետարանի այլ հատվածներում չկան: Դրանց թիվն է 14 կամ 2x7:

(14) Այս 14 ձևերի թվային արժեքն է 8.715 կամ 1.245x7:

(15) Այս հատվածի բառապաշարը կազմող 77 բառերից 28-ը՝ 4x7-ը, հրեշտակը գործածեց Յովսեփի հետ խոսելու ժամանակ:

(16) Հրեշտակի ասած բոլոր բառերի թվային արժեքն է 21.042 կամ 3.006x7:

(17) Հրեշտակի ասած բառերի ձևերի թիվն է 35 կամ 5x7:

(18) Հիշյալ 35 ձևերի թիվն է 168 կամ 24x7:

(19) Հրեշտակի գործածած 35 ձևերի թվային արժեքն է 19.397 կամ 2.771x7:

Այս 19 ձևերը տվյալ հատվածում գոյություն ունեցող թվային իրողություններից մի քանիսն են տակավին: Ամբողջ հատվածը լեցուն է դրանցով:

Օրինակ 4

Մատթեոսի ավետարան 2-րդ գլուխ. Քրիստոսի մանկության պատմությունը:

(1) Մատթեոսի 2-րդ գլխի բառապաշարը կազմող հոլևարեն բառերի թիվն է 161 կամ 23x7:

(2) Այս 161 բառերում տառերի քանակն է 896 կամ 128x7:

(3) Հիշյալ 161 բառերի թվային արժեքն է 123.529 կամ 17.547x7:

(4) Այս գլխում եղած բառերը գրված են 238 ձևերով, այսինքն՝ 34x7:

(5) Նույն 238 ձևերի թվային արժեքն է 166.985 կամ 23.855x7:

Մատթեոսի ավետարանի 2-րդ գլխում մի քանի հատվածներ կան: Յուրաքանչյուր հատված իրեն հատուկ զարմանալի երևույթներ է պարունակում: Դրանք այդ գլխի մյուս մասերից առանձին են, սակայն իրենց առանձին ու նուրբ գեղեցկությամբ ամբողջ գլխի զարմանալի երևույթների մի մասն են կազմում:

Դրանք այնքան զարմանալի կերպով հյուսված են միմյանց հետ, որ ամբողջ գլուխը հիանալի թվային իրողություններ պարունակող մեծ մաթեմատիկական կտոր է ներկայացնում:

Օրինակ՝ առաջին 6 համարների բառապաշարը կազմող հոլևարեն բառերի թիվն է 56 կամ 8x7:

Այս գլխում երեք խոսող անձիք կան՝ Հերովդեսը, մոգերը և հրեշտակը:

Յուրաքանչյուրի խոսքը զարմանալի թվային երևույթներ է պարունակում:

Միևնույն ժամանակ բոլորը միանալով՝ բազմաթիվ երևույթներ են ներկայացնում: Յուրաքանչյուր մաս ներկայացնում է նույն երևույթները, որ ներկայացնում է ամբողջ գլուխը:

Այս երևույթները բնագրում այնքան խորունկ են ծածկված, որ հազարավոր ընթերցողներ չեն կարողացել նկատել:

Օրինակ 5

Մարկոսի ավետարան 1.1-8: Այս համարներում տեսնում ենք հետևյալը.

(1) Այս 8 համարներում կան 126 հոլևարեն բառեր, այսինքն՝ 18x7:

(2) Հիշյալ 126 բառերում տառերի քանակն է 427 կամ 61x7:

(3) Հիշյալ 427 տառերի մեջ ձայնավոր տառերի թիվն է 224 կամ 32x7:

(4) Վերոգրյալ 126 հոլևարեն բառերում վանկերի թիվն է 294 կամ 42x7:

(5) Այս 126 հոլևարեն բառերից ձայնավորով սկսվողների քանակն է 42 կամ 6x7, իսկ բաղաձայնով սկսվողներինը՝ 84 կամ 12x7:

(6) Այս 8 համարների բառապաշարը կազմող բառերի թիվն է 77 կամ 11x7:

(7) Հիշյալ 77 հունարեն բառերից 21-ը՝ 3x7-ը, գործածեց Հովհաննես Մկրտիչը:

(8) Այս 8 համարներից առաջին 5-ը առանձին բաժանում են ներկայացնում: Այդ 5 համարների բառապաշարը կազմող բառերի թիվն է 49 կամ 7x7: Մյուս 3 համարները մեկ այլ բաժանում են ներկայացնում, որոնց բառապաշարը կազմող բառերի թիվն է 28 կամ 4x7:

(9) Վերոգրյալ 77 հունարեն բառերից ձայնավորով սկսվողների քանակն է 42 կամ 6x7:

(10) Այս հատվածում ամենից երկար բառն ունի 14 տառ, այսինքն՝ 2x7:

Այս 8 համարներում տակավին բազմաթիվ երևույթներ կան, որոնք մեկ առ մեկ նշելն ավելորդ է:

Սբ. Գրքի բնագրի ամեն մի մասում՝ սկսած Ծննդոց գրքի առաջին համարից մինչև Հայտնության գրքի վերջին համարը, վերոգրյալ թվային երևույթների նման անթիվ զարմանալի բաներ գոյություն ունեն: Դրանք հայտնաբերվում են Սբ. Գրքի 66 գրքերից յուրաքանչյուրում: Նույնիսկ ամենապարզ համարը լեցուն է այդպիսի թվային երևույթներով: Հազիվ 175 բառից կազմված պարբերությունը երբեմն 100-ից ավելի թվային երևույթներ է պարունակում, որոնք հայտնաբերվում են երկար ու մանրագնին քննությունների արդյունքում:

ՉԱՐՄԱՆԱԼԻ ԹՎԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ՍՈՒՐԲ ԳՐԵԻ ՄԻ ՇԱՐՔ ԲԱՌԵՐՈՒՄ

Մինչև այս տեսանք Սբ. Գրքի հատվածներում գոյություն ունեցող զարմանալի թվային երևույթները: Նույն զարմանալի երևույթներն ենք տեսնում՝ ուսումնասիրելով, թե այս կամ այն հատուկ անունը կամ կարևոր բառը Հին ու Նոր կտակարանների մեջ քանի անգամ է գործածված:

Օրինակ.

(1) «Մովսես»-ը՝ Սբ. Գրքի գրողներից առաջինի անունն է:

«Մովսես» անունը Սբ. Գրքում գործածվել է 847 անգամ, այսինքն՝ 121x7: Եթե քննենք այս անունը, նրա 847 գործածությունները, այդ բոլոր գործածությունների տառերը և տառերի արժեքները, և եթե դրանք գումարենք և հաշվենք, 38 զարմանալի ու տարբեր երևույթների կհանդիպենք: Ուրեմն պատահական չէ, որ «Մովսես» անունը գործածվել է ճիշտ 847 անգամ:

(2) Հին ուխտը գրելու համար Տիրոջ կողմից գործածված անձնավորությունների անունները, որոնք նշված են Նոր կտակարանում, 7-ն են՝ Մովսես, Դավիթ, Եսայի, Երեմիա, Դանիել, Ովսե և Հովել:

Այս 7 անունների թվային արժեքն է 1.554 կամ 222x7:

Այս 7 անունները Հին ուխտում նշված են ճիշտ 2.310 անգամ, այսինքն՝ 330x7:

Այս 7 անուններից ամենից շատ նշված է «Դավիթ» անունը՝ 1.134 անգամ, այսինքն՝ 162x7:

(3) Նոր կտակարանի 27 գրքերից յուրաքանչյուրի առաջին և վերջին բառերը զարմանալի թվային երևույթներ ունեն:

Նոր կտակարանի 27 գրքերն սկսվում են 27 բառերով և վերջանում դարձյալ 27 բառերով: Այդ 54 բառերի թվային արժեքն է 46.949 կամ 6.707x7: Այդ 54 բառերն առնվազն 12 զարմանալի թվային երևույթներ են ներկայացնում:

(4) Սրանցից բացի կան մի շարք առանձին բառեր, որոնց ուսումնասիրության ժամանակ զարմանալի երևույթներ են պարզաբանվում մեզ համար:

Օրինակ՝ «Է - Օ - ՆԻՈՍ» բառը, որը նշանակում է «հավիտենական», ունի 1.141 թվային արժեք, այսինքն՝ 163x7:

Այս բառը բաղկացած է երկու մասից՝ «Էօն» և «իոս»: «Էօն» բառի թվային արժեքն է 861 կամ 123x7: «իոս» մասնիկի թվային արժեքն է 280 կամ 40x7:

Այս հունարեն բառը Նոր կտակարանում նշված է 70 անգամ, այսինքն՝ 10x7:

Այս բառի բոլոր 70 գործածությունների թվային արժեքն է 76.783 կամ 10.969x7:

Այս 70 բառերից որոշները եզակի և որոշները հոգնակի ձևով են գրված: Եզակի ձևով բոլոր գործածված բառերի թվային արժեքն է 67.893 կամ 9.699x7, իսկ հոգնակի ձևով գործածվածներինը՝ 8.890 կամ 1.270x7:

«Հավիտենական» իմաստը կրող այս հունարեն բառը՝ «Էօնիոս»-ը, տակավին պարզում է բազում թվային երևույթներ, որ հարկ չենք համարում մեկ առ մեկ թվարկելու:

(5) Դիտարկենք մեկ ուրիշ բառ. «տարի» բառը Ծննդոց գրքում գործածված է այնքան զարմանալի կերպով, որ առնվազն 20 հիանալի թվային երևույթներ կարող ենք գտնել:

Սբ. Գրքում ուրիշ հազարավոր բառեր կան, որոնցից յուրաքանչյուրը սրանց նման զարմանալի թվային հաշիվներ է ներկայացնում: Այնպես որ, նրանցից մեկը պակասեցնելիս կամ նրանց վրա մեկը ավելացնելիս Սբ. Գրքում գոյություն ունեցող զարմանալի ծրագիրը, կազմը և տիպը կավերվեն:

ԳԼՈՒԽ Գ

ԱՅՍ ՆՈՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԻՏԱԿԱՆՈՐԵՆ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ ԵՆ, ՈՐ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԳԵՐԲՆԱԿԱՆ, ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՑՈՒՐ ԳԻՐՔ Է

Աբ. Գրքում գոյություն ունեցող հազարավոր զարմանալի թվային երևույթները կամ իրողությունները անուրանալի են: Ոչ ոք չի կարող անտեսել դրանք կամ իր աչքերը փակել դրանց առջև: Եթե մեկն էլ այդպես անի, դրանք տակավին կմնան իրենց տեղում:

Մենք ուզենք թե չուզենք, ընդունենք թե չընդունենք, իրականությունը չենք կարող փոխել: Դրանց գոյությունը մի ճշմարտություն է, որ ամեն ոք պարտավոր կլինի ընդունել՝ կանգնելով մի տրամաբանական հարցի առջև, որը պատասխան է պահանջում: Եվ հարցը սա է. «Այս իրողությունների գոյությունը ինչպե՞ս կարող է մեկնաբանվել»: Իսկապես, այս իրողություններն ինչպե՞ս մտան Աբ. Գրքի մեջ: Սրանք համոզիչ մեկնություններ են պահանջում: Ի՞նչ պատասխան կարող ենք տալ:

Միայն երկու մեկնություն կարելի է տալ.

1. Սրանք կարող են լինել պատահամաբ,
2. Սրանք կարող են լինել հատուկ նպատակով:

Այսինքն՝ այս զարմանալի իրողությունների գոյությունը կարող է լինել առանց դիտավորության կամ նպատակի, բայց և՛ դիտավորությամբ կամ հատուկ ծրագրով: Ո՞րը կարող է լինել:

Դիցուք՝ մի մարդ տոպրակի մեջ 24 նարինջ ուներ: Տոպրակը հանկարծ ձեռքից ընկավ, և նարինջները թափվեցին: Դրանք ինչպե՞ս կընկնեն գետնի վրա: Չէ՞ որ անկանոն ձևով այստեղ-այնտեղ կցրվեն:

Ենթադրենք՝ դու մի տեղ գնացիր և վերադարձիդ տեսար, որ այդ 24 նարինջները շարված են չորս գծի վրա՝ յուրաքանչյուր գծի վրա՝ ճիշտ 6 նարինջ: Բնական չէ՞, որ դու մի եզրակացության կգաս, այսինքն՝ կխորհես, որ դրանք նպատակով են այդպես շարված:

Այդպես էլ Աբ. Գրքի բնագրում գոյություն ունեցող հազարավոր թվային երևույթներն ու տիպերը պատահամաբ չեն կարող լինել: Դրանք որոշակի ծրագրով և նպատակով են արվել: Իսկ եթե այդպես է, ուրեմն անպատճառ մի ծրագրող կա: Ո՞վ է նա: Այս զարմանալի թվային ծրագրերը ո՞վ հղացավ և կատարեց: Այս հարցմանն էլ կարելի է երկու պատասխան տալ: Դրանք կարող են լինել կամ մարդկային իմաստության, կամ գերմարդկային իմաստության, այսինքն՝ աստվածային մտքի արդյունք:

Արդյո՞ք դրանք մարդկային էակների միջոցով կարող են ծրագրված լինել:

Պատասխան (1) Աբ. Գրքի յուրաքանչյուր հատվածի, բաժանման և ստորաբաժանման մեջ նկատված այսքան զարմանալի թվային երևույթներն ու հաշիվները պարզ մարդկային էակների կողմից գրված և ծրագրված չեն կարող լինել:

Եթե որևէ մարդ կարողանա 300 բառով Մատթեոսի ավետարանի 1.1-17 համարների նման հասկանալի մի բան գրել, այնպես, որ իր գործածած բոլոր բառերը, տառերը և այդ տառերի թվային արժեքների գումարը նույնպես բաժանվեն 7-ի, և եթե այս գործը կարողանա կատարել վեց ամսվա մեջ, նա ապացուցած կլինի, որ ինքը հրաշագործ է:

Եթե որևէ մարդ կարողանա 161 բառով Մատթեոսի ավետարանի 1.18-25 համարների նման մի բան գրել, այնպես, որ իր բառերի և տառերի թվի ու կազմի մեջ գոյություն ունենան

նույնքան 7-եր, որքան այնտեղ կան, և եթե այդ գործը կարողանա գլուխ բերել՝ երեք տարի անդադար աշխատելով, ևա շատ ավելի մեծ գործ կատարած կլինի:

Եթե որևէ մարդ, իր ամբողջ կյանքը զոհելով և անդադար աշխատելով, կարողանա 500 բառից կազմված հասկանալի մի հատված գրել, որի կազմի մեջ լինեն միմյանց հյուսված նույնքան ներդաշնակ երևույթներ, որչափ Մատթեոսի ավետարանի 2-րդ գլխում, այդ անհատին հրաշքների հրաշք պետք է համարել:

Ոչ մի մահկանացու, նույնիսկ եթե հարյուր տարի շարունակ աշխատի, չի կարող Սբ. Գրքում ընդգրկված գրքերից միայն մեկի նման մի բան գրել: Դարեր են պետք (եթե երբևիցե հնարավոր լինի) Մատթեոսի ավետարանի նման ծրագրված և իր կազմության մեջ նույնքան թվային երևույթներ պարունակող մի գիրք գրելու համար:

Պետք է հիշել նաև, որ յուրաքանչյուր նախադասության հավելումով այս թվային երևույթների կազմության դժվարությունը երբեմն ավելանում է: Ուրեմն յուրաքանչյուր պարբերություն այնպես պետք է կազմվի, որ հնարավոր լինի որոշակի թվային հարաբերություններ պահել հատվածի այն մասի հետ, որ իրեն հաջորդում է:

Այսպիսով, յուրաքանչյուր տառի, բառի և նախադասության հավելումը խնդիրն ավելի ու ավելի կնճռոտ, ընդարձակ և դժվարին կդարձնի:

Պետք է նկատել նաև, որ Սբ. Գիրքը գրողներից շատերը հասարակ խավերից ընտրված մարդիկ էին, ովքեր բարձր ուսում չունեին: Եթե Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասը և Յովհաննեսը ուզեին իրենց գրած գրքերը ճիշտ այս ձևով գրել և ձեռնարկեին նույն թվային երևույթները դեռ իրենց գրքերի մեջ՝ դրանց բաժանումները, ստորաբաժանումները, բառերը, ձևերը, բառապաշարը, տառերը հաշվելով և համրելով, իրենց տառերը գրելու համար որչափ ժամանակ պիտի վատնեին: Սրա համար դարեր էին պետք: Մարդու մտքի սահմանափակությունը և կյանքի կարճությունը անկարելի են դարձնում այսպիսի մի ձեռնարկի հաջողությունը:

Դոկտոր Տ. Պ. Թրևին ասում է. «Ես աշխատեցի գրել մի պարբերություն, որի բառերի և տառերի թվի մեջ մի քանի յոթեր լինեն: Անգլերեն տառերին թվային արժեքներ դրեցի և շատ աշխատանք թափեցի գոնե մի քանի նախադասություններ կազմելու համար, որ համապատասխանեին Սբ. Գրքի մի հատվածի կազմությանը: Ուզեցի յուրաքանչյուր մաս բաժանելի դարձնել 7-ի՝ նախադասություններն առանց վերածելու անիմաստ խոսքի: Սրա համար օրերով աշխատեցի, սակայն հաջողություն չունեցա: Արդյոք զարմանալի չէ՞, որ այդ երևույթները գոյություն ունեն Սբ. Գրքի հազարավոր պարբերություններում, այն էլ այնքան բնական կարգով և առանց որևէ զգալի ջանքի»:

Պատասխան (2) Չարմանալի թվային ծրագրերը, որոնք հայտնաբերվում են Սբ. Գրքի բազում գրքերում, բուն գրողների կողմից մտածված ու կատարված լինել չեն կարող: Այդքան շատ և այդքան հրաշալի թվային ծրագրեր և ձևեր Սբ. Գրքի միայն պարբերություններում և հատվածներում չէ, որ կարելի է տեսնել. Սբ. Գրքի միմյանցից ընդարձակորեն առանձնացված մասերը, իրար հետ հյուսվելով, նույնպես կատարյալ և գեղեցիկ տիպեր են ստեղծում: Սբ. Գրքի բազում գրքերում առանձին բառերը ևս շղթայված ձևեր են ստեղծում, որոնք լեցուն են թվային երևույթներով:

Օրինակ՝ «Մովսես» անվան մեջ հայտնաբերված երևույթը՝ նրա մեջ եղած 7-երը, Սբ. Գրքի գրողների ծրագրած և կատարած գործը չեն կարող լինել: Պետք է հիշել, որ այս մատենագիրները ժամանակակից անհատներ չէին: Սբ. Գրքի առաջին և վերջին գրքերի ստեղծման միջև 1600 տարիներ են ընկած: Այս մատենագիրները տարբեր երկրներում էին ապրում և տարբեր դասակարգերի մարդիկ էին, որոնցից շատերը բարձրագույն ուսում չունեին: Այսքան մատենագիրներ ինչպե՞ս կարողացան հղանալ այն գաղափարը, որ «Մովսես» անունը Սբ. Գրքի տարբեր գրքերում հենց այսքան անգամ պետք է գործածեն, որ նրանց բոլոր զարմանալի թվային ձևերը հայտնվեն: Ինչպե՞ս եղավ, որ գրողները մեկ հատը

պակաս թողեցին, մինչև որ Ծննդոցի գրվելուց 1600 տարի հետո Յովհաննես առաքյալը, մեկ անգամ էլ գրելով այդ անունը Յայտնության գրքում, պակասը լրացրեց:

«Մովսես» բառի պես տակավին ուրիշ հարյուրավոր բառեր կարող ենք ցույց տալ, որոնք բոլորն էլ հաշվով ու համրանքով են գրված և զարմանալի թվային երևույթներ են ներկայացնում՝ թվեր, որոնք բոլորն էլ բաժանվում են 7-ի:

Ամբողջ Սբ. Գրքի յուրաքանչյուր բառ կապված է զարմանալի մի օրինակի և ձևի հետ: Անջատ և փոքր նմուշները՝ բոլոր գեղեցկություններով և նրբություններով, երբ միացնես միմյանց, մի մեծ և հրաշալի տիպ կներկայացնեն:

Այսպես Սբ. Գրքի բոլոր գրքերը՝ Ծննդոցից մինչև Յայտնություն, կապված են միմյանց: Յատվածները կապակցված են հատվածների հետ, ինչպես գրքերը գրքերի հետ, և այդ կապերն անխզելի են: Յին և Նոր կտակարանները միանալով միմյանց՝ մի ամբողջություն են կազմում և շատ կանոնավոր ու զարմանալի թվային երևույթներ բացահայտում յուրաքանչյուր փնտրողին:

Բոլոր իմաստուն անհատները, որոնք ապրել են երկրագնդի վրա, չեն կարող այսքան գերազանց մաթեմատիկական ծրագրեր հղանալ:

Պատասխան (3) Սբ. Գրքի յուրաքանչյուր գրքում նկատված առանձին աշխատասիրված թվային ձևերը չեն կարող հղացած ու կատարված լինել լոկ գրողների կողմից: Օրինակ՝ Մատթեոսի ավետարանում կան բառեր, որոնք Նոր կտակարանի մյուս 26 գրքերում բնավ գոյություն չունեն: Այդ բառերը եթե քննվեն, մեզ շատ սքանչելի ձևեր կներկայացնեն: Ինչպե՞ս իմացավ Մատթեոսը, որ պետք է գործածի հենց այսքան բառեր, որոնք Նոր կտակարանի ուրիշ մասերում բնավ չպիտի լինեն: Այս բանը ոչ միայն Մատթեոսի ավետարանում ենք տեսնում, այլև Նոր կտակարանի մյուս 26 գրքերում: Յուրաքանչյուր գրքում կան բառեր, որոնք ուրիշ գրքերում գոյություն չունեն, և դրանք շատ զարմանալի երևույթ են ցույց տալիս: Ինչպե՞ս իմացավ յուրաքանչյուր գրող, որ ինքը հենց այսքան բառեր պետք է գործածի, որոնք ուրիշ գրքերում չպիտի գրվեն: ԱՇԽԱՐՀՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻԱԿ ԳԻՐՔԸ, ՈՐ ԱՅՍՊԵՍ ՉԱՐՄԱՆԱԼԻ ԹՎԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ Է ԳՐՎԱԾ, ՍՈՒՐԲ ԳԻՐՔՆ Է:

Սբ. Գրքի թվային ձևերի դեմ հարուցված ընդհանուր առարկությունն այն է, թե նմանօրինակ թվային իրողություններ կարելի է դուրս բերել նաև որևէ լեզվով գրված որևէ գրությունից, եթե բավականաչափ ժամանակ և աշխատանք հատկացվի: Սակայն իրողությունը բնավ այդպես չէ: Սբ. Գիրքը մյուս բոլոր գրքերից տարբեր է: Նրա բնագրի բառերի կազմության մեջ եղած այս հիանալի թվային ձևերը կամ նմանօրինակ երևույթները աշխարհի որևէ լեզվի և որևէ գրականության մեջ բնավ չի հայտնաբերվում:

Օրինակ՝ «ապոկրիֆներ» կոչվող «անկանոն» գրքերը, որ ոմանք Սբ. գրքին հավասար կամ նրա մեկ մասն են համարում, այսպիսի թվային ծրագրերի օրինակներ չունեն:

Յունարեն գրված դասական և կարևոր գրքերը քննելու համար տարբեր անձիք երկարատև ժամանակ վատնեցին՝ նույն տեսակի թվային տիպեր ի հայտ բերելու միտումով: Սակայն որևէ գրության մեջ այսպիսի բաներ տակավին չկարողացան գտնել: Այս խնդիրը հունարենի հմուտ պրոֆեսորների է ներկայացված և նրանց առաջարկված է հունարեն արձակ գրությունները քննել և տեսնել՝ արդյո՞ք նրանցից որևէ մեկի մեջ այսպիսի զարմանալի թվային կարգ ու ծրագրեր գոյություն ունեն: Նրանցից որևէ մեկը մինչև հիմա չի կարողացել որևէ դրական տեղեկություն հայտնել:

Մարդկային ոչ մի էակ չէր կարող Սբ. Գիրքը գրել այնպես, ինչպես գրված է: Մարդկային ոչ մի նախատեսություն կամ կազմակերպություն չէր կարող ապահովել այսպիսի արդյունքներ: Մարդկային ոչ մի հանճար չէր կարող գիրքն այսպիսի կատարելության հասցնել: Մարդիկ մտային զարգացումով չեն կարող կատարել այսպիսի բաներ, որովհետև դա բացարձակապես անկարելի է: Երբ ենթադրում ենք, թե Սբ. Գիրքը լոկ մարդկային մի

հեղինակություն է, այս թվային ձևերը լուծելը կամ բացատրելը բացարձակապես անկարելի է դառնում:

Եթե մարդկային տրամաբանությունը որևէ արժեք ունի, մենք անխուսափելիորեն կհանգենք այն եզրակացության, որ Սբ. Գրքի բնագրի և կազմության մեջ հայտնաբերված հազարավոր զարմանալի երևույթներն իրենց գրողների արգասիքը չեն: Հայտնի է, որ այդ Գիրքը բազում մտքերի գործ չէ: Այս երևույթները հայտնի և անհերքելի ապացույցներ են՝ մեզ համոզելու համար, որ ամբողջ Սբ. Գիրքը մեկ հեղինակ ունի: Հին ուխտի և Նոր կտակարանի բոլոր գրքերն էլ նույն հեղինակի կողմից են ծրագրված ու գրված: Յուրաքանչյուր անկեղծ և տրամաբանող անհատ պարզապես ստիպված է ընդունել, որ Սբ. Գիրքը ծրագրող և պատրաստող միտքը գերմարդկային և աստվածային պետք է լինի: ԱՅԴ ԾՐԱԳՐՈՂԸ ՄԵԾ ԳԵՐԲՆԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՂՆ Է: Միայն գերագույն, ամենագետ, ամենակարող Աստված կարող է այսպիսի երևույթներ դնել իր Գրքի բառերի մեջ: Հավիտենական ամենակարող Հեղինակն է, որ ծրագրեց, առաջնորդեց, հսկեց և իր անսահման ծրագիրը ներկա կատարելության հասցրեց: Այս եզրակացությունից անկարելի է խուսափել:

Այս նոր գտնված ծրագրերն ու թվային ձևերը կամ իրողությունները գիտականորեն ապացուցում են, որ Սբ. Գրքի՝ իր մասին արված մեծ վկայությունը իրավամբ ճշմարիտ է: Այն բառերը, որ Սբ. Գրքի գրողները գործածեցին, իրենց բառերը չէին: Դրանք Աստծո բառերն էին, որ իրենց տրվեցին, իսկ իրենք Աստծո Սուրբ Հոգու առաջնորդությամբ գրի առան:

Սբ. Գրքի ներշնչման շուրջ բազում հայեցողություններ կան: Սակայն դրանք մեկ առ մեկ քննարկելու կարիք չկա այլևս: Մեր աչքերի առջև կա մի շատ զորավոր փաստ, գործնական և գիտական ապացույց՝ Սբ. Գրքի աստվածային և բառային ներշնչումը: Իրողություններն անուրանալի և անհերքելի են, իսկ նրանց եզրակացությունները՝ անխուսափելի: Սրանք բառային ներշնչման զորավոր, անդիմադրելի և ջախջախիչ ապացույցներ են, որոնց առջև անհավատների բոլոր փաստերը և առարկությունները փշրվում և ոչնչանում են:

Բացարձակապես հիմարություն է ասել, թե Սբ. Գրքի բառերի մեջ այսպիսի զարմանալի ձևեր և երևույթներ գոյություն չունեն: Դրանք, անշուշտ, կան: Նմանօրինակ բան ասելը նույնքան հիմարություն է, որքան պնդելը, թե կենդանի մարդկային էակի մարմնում արյուն ասված հեղուկը գոյություն չունի:

Ապացույցներն ու իրողություններն այնքան զորավոր են, որ ոչ մի կործանիչ քննադատ չի կարող հաջողությամբ դիմադրել դրանց, քանի որ դիմադրել՝ նշանակում է անպայման անձնատուր լինել (ինչն անխուսափելի է): Ոչ մի անհավատ չի կարող հերքել իրողությունների այդ համոզիչ շարքը: Ով չի ուզում հավատալ կամ ընդունել, նրա համար լավագույն ճանապարհը դրանք չիմանալը կամ չտեսնելն է:

Ռ. Ինկրետոլ անունով անվանի մի հրապարակախոս շարունակ աղաղակում էր մի հրաշքի համար:

Ահավասիկ հարյուրավոր հրաշքներ: Եթե սրանք հրաշալի կերպով չծրագրվեցին, թող մեզ ցույց տան, թե ինչպես գոյություն ունեցան և մտան Սբ. Գրքի բնագրի մեջ:

ԳԼՈՒԽ Դ

ՆՈՐ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՄԱՍԻՆ ԽՈՍՈՒՄ ԵՆՔ, ԻՆՉ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕԳՈՒՏ ՈՒՆԵՑԱՆ

Այս Նոր հայտնաբերված զարմանալի գյուտերը մեկընդմիջտ լուծեցին հետևյալ երկու կարևոր խնդիրները.

1. Դրանք հաստատեցին, որ Սբ. Գրքը բառ առ բառ Աստծո խոսքն է և տրված է Աստծուց:

Տարիներ ի վեր մարդիկ կարծիքներ են հայտնել Սբ. Գրքի մասին: Ոմանք ասել են, թե այն մարդկային գիրք է՝ պարզապես մարդկանց կողմից գրված, հետևաբար, նրա մեջ սխալներ կան: Ուրիշներն այլ ձևով են արտահայտվել: Այժմ այս խնդիրը որոշակիորեն լուծված է: Սբ. Գրքի բնագրում եղած խորունկ ու զարմանալի իրողությունները գիտականորեն ապացուցում են, որ Սբ. Գրքի՝ մարդկային էակների կողմից գրված լինելն անկարելի է: Դրանք անհերքելի փաստերով ապացուցում են, որ Սբ. Գրքը գերբնական, աստվածատուր գիրք է: Ցանկացած աննախապաշար և ճշմարտասեր անձ, որ պատրաստ է իրողությունները դիմագրավելու, կհամաձայնի սրան:

Նոր կտակարանում կան մի քանի հատվածներ, որոնց շուրջ վիճաբանություններ են եղել:

Ոմանք մտածել են, թե դրանք Սբ. Գրքի մասը չեն կազմում, այլ վերջերս նրա մեջ մուտք գործած հավելումներ են: Նոր հայտնաբերված զարմանալի գյուտերն այս դժվարությունը լուծել են: Այժմ դիտարկենք այդ հատվածներից մի քանիսը.

Ա. - Մարկոսի ավետարան 16.9-20 համարները:

Այս հատվածը Աստծո ներշնչյալ խոսքի մասն է կազմում, քանի որ հետևյալ թվային զարմանալի երևույթներն ու իրողությունները ոչ մի մարդու գրության մեջ չենք կարող տեսնել.

- (1) Մարկոս 16.9-20 համարներում կան 175 հունարեն տառեր, այսինքն՝ 25x7:
- (2) Այս հատվածի բառապաշարը կազմող բառերի թիվն է 98 կամ 14x7:
- (3) Այս 98 բառերի մեջ գոյականների թիվն է 21 կամ 3x7, իսկ ոչ գոյականներինը՝ 77 կամ 11x7:
- (4) Այս 21 գոյականներից բաղաձայնով սկսվողները 14-ն են՝ 2x7:
- (5) Այս հատվածի բառապաշարը կազմող 98 բառերն ունեն 553 տառեր, այսինքն՝ 79x7:
- (6) Այս 553 տառերի մեջ ձայնավորները 294-ն են՝ 42x7, իսկ բաղաձայնները՝ 259՝ 37x7:
- (7) Այս 98 բառերը գրված են 133 ձևերով, այսինքն՝ 19x7:
- (8) Այս 133 ձևերի թվային արժեքն է 89.663, այսինքն՝ 12.809x7:
- (9) Հիշյալ բառապաշարը կազմող 98 բառերից մի քանիսը Մարկոսի ավետարանի այլ հատվածներում գործածված չեն. դրանց թիվն է 14 կամ 2x7, իսկ մյուսները հանդիպում են Մարկոսի ավետարանի այլ հատվածներում ևս. դրանց թիվն է 84 կամ 12x7:

(10) Այս 98 բառերից 42-ը՝ 6x7-ը, Քրիստոսը գործածեց իր աշակերտների հետ խոսելիս, իսկ Քրիստոսի չգործածած բառերի թիվն է 56 կամ 8x7:

(11) Մարկոսի ավետարանի այս վերջին 12 համարների 175 բառերից 56-ը՝ 8x7-ը, Տեր

Չիսուսը գործածեց իր աշակերտների հետ խոսելիս, իսկ Նրա չգործածած բառերի թիվն է 119 կամ 17x7:

Մարկոսի ավետարանի վերջին 12 համարները բաժանվում են երեք բնական մասերի:

Այժմ դիտարկենք այս բաժանումները:

Առաջին մաս՝ 9-11 համարները.

(12) Այս երեք համարներում կան 35 հունարեն բառեր, այսինքն՝ 5x7:

(13) Այս 35 բառերի թվային արժեքն է 172.13 կամ 2.459x7:

(14) 9-րդ և 11-րդ համարների թվային արժեքն է 11.795 կամ 1.685x7, իսկ 10-րդ համարի թվային արժեքն է 5.418 կամ 774x7:

(15) 10-րդ համարում առաջին հունարեն բառի թվային արժեքն է 98 կամ 14x7:

(16) Նույն համարի վերջին հունարեն բառի թվային արժեքն է 791 կամ 113x7, իսկ մյուս բառերի թվային արժեքն է 4.529 կամ 647x7:

(17) 9-11 համարներում ձայնավորով սկսվող բառերը 14-ն են՝ 2x7:

(18) Հիշյալ 35 բառերը կազմված են 84 տառերից, այսինքն՝ 12x7:

Մենք դիտարկեցինք Մարկոսի ավետարանի վերջին 12 համարների առաջին մասը: Սակայն այս գրվածները բոլորը չեն: Առաջին մասում զարմանալի թվային երևույթների տակավին շատ օրինակներ կան:

2-րդ և 3-րդ մասերը նույնպես լի են սրանց նման հիասքանչ օրինակներով, որոնք հարկ չկա մեկ առ մեկ թվարկելու:

Մարկոսի ավետարանի վերջին 12 համարներում ոչ միայն շատ թվային իրողություններ և երևույթներ կան, այլ նաև որոշ բառեր, որոնք Նոր կտակարանի տարբեր գրքերում նշված նույն բառերի հետ աշխատասիրված սքանչելի թվային ձևեր են կազմում: Օրինակ՝ հունարեն «բապթիզո» բառը, որ «մկրտվել» է նշանակում, Մարկոսի ավետարանի այս վերջին 12 համարներում միայն մեկ անգամ է նշված: Եթե փնտրենք և գտնենք, թե այս բառը որ տեղերում է գործածված և քանի անգամ, այնուհետև բոլորը միացնենք և մեկտեղ քննենք, 20-ից ավելի հրաշալի երևույթներ կբացահայտվեն մեր աչքերի առջև: Ուրեմն, եթե Մարկոսի ավետարանի այս վերջին 12 համարները Նոր կտակարանից հեռացվեն, այս բառի քանակը մեկով կպակասի, որի պատճառով ամբողջ Նոր կտակարանում «բապթիզո» բառի միջոցով կերտված հիասքանչ թվային երևույթներն ամբողջովին կավերվեն:

Այս 12 համարներում ուրիշ շատ բառեր կան, որոնք նույնպես օղակներ են, և երբ միանան Նոր կտակարանի այլ մասերում գտնվող նույն բառերի հետ, շատ զարմանալի և նուրբ թվային երևույթներ և օրինակներ կներկայացնեն: Ուստի, եթե այս 12 համարները հեռացվեն, բազմաթիվ հրաշալի թվային ձևեր և օրինակներ կավերվեն ու կվերանան:

Ուրեմն, հայտնաբերված թվային իրողությունները որոշակի փաստեր են, որ Մարկոսի ավետարանի վերջին 12 համարները ոչ թե դրսից մուտք գործած հավելումներ են, այլ

Աստծուց տրված ներշնչյալ հատված, որ արժանի է զբաղեցնելու իր տեղը Աստծո ներշնչյալ Գրքում:

Բ.– Հովհաննեսի ավետարան 7.53-8.11. շնության մեղքի մեջ բռնված կնոջ պատմությունը:

Այս հատվածը թեև որոշ ձեռագրերում նկատվում է, բայց մի շարք հին ձեռագրերում գոյություն չունի:

Ո՞ր ձեռագրերն են ճշմարիտ: Այս հատվածի շուրջ երկար վիճաբանություններ են եղել: Ոմանք ասում էին, որ սա ներշնչյալ Գրքի ներշնչյալ մասն է կազմում: Ուրիշներն էլ պնդում էին, թե այս հատվածը մի անծանոթ մարդու կողմից ընդգրկված հավելված է:

Նոր հայտնաբերված թվային երևույթներն այս հարցն էլ վերջնականապես լուծեցին: Ինչ որ ասվեց Մարկոսի ավետարանի վերջին 12 համարների վերաբերյալ, ճշմարիտ է նաև այս հատվածի համար: Այստեղ ևս թվային զարմանալի ձևեր և երևույթներ են նկատվում, որոնք աշխարհի վրա գոյություն ունեցող որևէ մարդու գրության մեջ չեն նկատվել և չկան:

Գ.– Ղուկասի ավետարան 23.34. խաչի վրա Քրիստոսի աղոթքը. «Հայր, թողություն տուր դրանց, քանի որ չգիտեն, թե ինչ են անում»:

Նոր կտակարանի որոշ հին ձեռագրերում այս համարը չկա, թեև շատերի մեջ կա:

Ո՞ր օրինակներն են ճիշտ: Այս աղոթքը Աստծո ներշնչյալ Գրքի մասն է, թե՛ մարդկանց կողմից ներմուծված մի հավելում:

Մենք, անշուշտ, ցանկանում ենք իմանալ՝ Քրիստոսն այս աղոթքն արե՞ց, թե՞ ոչ: Նմանօրինակ խնդիրներն ու հարցումները շատ կարևոր են: Շատ մատենագիրներ կարծել են, թե այս համարը Աստծո ներշնչյալ խոսքի մեջ հավելում է: Սակայն տեսնում ենք, որ այս աղոթքը նույնպես լի է նույն հիասքանչ թվային երևույթներով, ինչպես Սբ. Գրքի մյուս բոլոր մասերը: Այս գործնական զորավոր ապացույցով էլ հաստատված է այս համարի ներշնչյալ լինելը: (Պետք է հիշել նաև, որ Քրիստոսը ճիշտ 7 անգամ խոսեց խաչի վրա: Եթե այս համարը հեռացվի Նոր կտակարանից, այդ 7 թվով կազմված ձևն էլ կավերվի):

Դ.– Ղուկասի ավետարան 22.44. Քրիստոսի տազնապը Գեթսեմանի պարտեզում. «Եվ Նրա քրտինքն էլ արյունի մեծ կաթիլների պես էր, որ թափվում էր գետնին»:

Այս համարը նույնպես վիճաբանության կյուրթ է եղել, քանի որ որոշ հին ձեռագիր օրինակներում բացակայում է: Այս խոսքը Աստծո ներշնչյալ խո՞սքն է, թե՞ ոչ: Այն զարմանալի թվային երևույթները, որ գոյություն ունենալու համարում, ապացուցում են, որ սա էլ մարդկանց կողմից ներմուծված խոսք չէ, այլ Աստծո ներշնչյալ խոսքը, որ արժանի է իր տեղը զբաղեցնելու Սբ. Գրքում:

Այսպիսի 12 հատվածներ կան, որոնք վիճաբանության կյուրթ են եղել, բայց այժմ բոլորն էլ կատարելապես լուծված և ապացուցված են:

ԳԼՈՒԽ Ե

ՎԵՑ ԳԵՐԱԶԱՆՑ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆՈՐ ՅԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՅԺՄ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ԼՈՒԾՎԱԾ ԵՆ

Ամփոփելով նոր հայտնաբերված թվային իրողությունների մատուցած ընդհանուր ծառայությունը և օգտակարությունը՝ պարզում ենք հետևյալը.

1. Նախորդ էջերում տեսանք, թե ինչպես գիտականորեն ապացուցված հիանալի թվային իրողությունները որոշակիորեն լուծեցին այն խնդիրը, որ Սբ. Գիրքն իրավամբ Աստծո ներշնչյալ Գիրքն է, ինչպես որ ինքն է վկայում իր մասին: Տեսանք, որ Սբ. Գրքի թվային զարմանալի կազմությունը պատահական լինել չի կարող, այլ կազմված է հատուկ ծրագրով ու նպատակով: Տեսանք նաև, որ այդ հսկա և զարմանալի ծրագիրը մարդու կողմից հղացած և կատարված բան չէ, այլ Աստծո ուղղակի գործն է:

2. Նոր հայտնաբերված իրողությունները հստակորեն լուծեցին մի շարք հատվածների ներշնչյալ լինել-չլինելու հարցը: Մարկոս 16.9-20, Յովհաննես 7.53-8.11 և սրանց նման ուրիշ մի քանի համարների շուրջ եղած վիճաբանությունները մեկընդմիջտ դադարել են:

3. Չարմանալի թվային իրողությունները մի շարք հատվածների ճիշտ ընթերցման շուրջ եղած դժվարությունները ևս հաջող ձևով լուծեցին: Բնագիր ձեռագիր օրինակների միջև եղած ամենափոքր տարբերությունները հայտնաբերվեցին թվային իրողությունների ծրագրով: Այսպիսով, ընթերցման ճշտությունը որոշվեց:

4. Թվային իրողություններն ուղղագրության, կետադրության, տառերի և բառերի կարգով դասավորության շուրջ եղած բոլոր վիճաբանությունները նույնպես կատարելապես լուծեցին: Դրանք լուծեցին նաև Սբ. Գրքում ընդգրկված գրքերի թիվը որոշելու խնդիրը: Հռոմեական Կաթոլիկ եկեղեցին, ինչպես նաև մյուս կաթոլիկ եկեղեցիներն իրենց Սբ. Գրքի Հին ուխտի մեջ ամփոփել են «ապոկրիֆներ» կոչվող 14 գրքերը, որոնք բողոքականները չեն ընդունում որպես ներշնչյալ գրքեր: Այս գրքերի տարեթիվը տատանվում է թ.ա. 300–թ.հ. 100 թթ.-ի միջև: Եթե այս գրքերը բացառություն համարենք, Հռոմեական և մյուս կաթոլիկ եկեղեցիների Սբ. Գիրքը համապատասխանում է բողոքականների Սբ. Գրքին:

Սուրբ Գրքում ընդգրկված գրքերի ճիշտ քանակը որքա՞ն է:

Բողոքականների Սբ. Գրքի բոլոր 66 գրքերում զարմանալի թվային ծրագրեր, օրինակներ, տիպեր կան, որոնք այս գրքերը միացնում են միմյանց և մի մեծ ամբողջություն կազմում, ինչպես մարդու մարմնի բազմաթիվ անդամները միանալով՝ մեկ մարմին են կազմում: Եթե մի գիրք ավելացնես կամ պակասեցնես, մի շարք նուրբ և զարմանալի թվային ձևերը, երևույթները, այլ կերպ ասած՝ գրքերը միմյանց հետ միացնող կապը կավերվի, և ծրագրերն ամբողջովին կվերանան:

Չարկ է նշել, որ «ապոկրիֆներ» կոչվող գրքերի բառերի մեջ թվային ձևերի նշաններ բնավ գոյություն չունեն: Հռոմեական և հույն կաթոլիկ եկեղեցիների Սբ. Գիրքն այս առումով ճիշտ չէ, քանի որ բովանդակում է նաև այդ գրքերը: Թվային իրողությունները գործում են որպես ինքնաշարժ արգելիչ Աստծո ծրագրած գրքերի թվի խախտման դեմ:

5. Այս նոր հայտնաբերված իրողությունները Սբ. Գրքում ընդգրկված գրքերի ճիշտ դասավորման շուրջ եղած հարցն էլ պարզեցին: Անգլերեն, ինչպես նաև հայերեն և այլ լեզուներով թարգմանություններում գրքերը դասավորված չեն այնպես, ինչպես եբրայերեն և հունարեն բնագրերում: Եբրայերեն և հունարեն նախնական բնագրերում եղած գրքերի շարքը պատահական չէ, այլ ծրագրված է Աստծուց: Հիասքանչ թվային մի ծրագիր կա Սբ. Գիրքը կազմող գրքերի կարգի ու դասավորման մեջ, և եթե գրքերից մեկը տեղափոխես, մի առանձին թվային հատակագիծ կձախողվի. թվային իրողությունները գործում են որպես ինքնաշարժ արգելիչ՝ աստվածային ծրագրով դասավորված Սբ. Գրքի 66 գրքերի տեղաշարժման դեմ: Սա մի ընդարձակ և զարմանալի նյութ է:

6. Նոր հայտնաբերված զարմանալի իրողությունները Սբ. Գրքի ուղիղ ժամանակագրության շուրջ եղած երկարատև վիճաբանություններն էլ լուծեցին: Սուրբգրային դեպքերը՝ սկսած Ադամի ժամանակից, որոնք հայտնված և ինչ-որ ձևով հաստատված են, Սբ. Գրքի բնագրի կազմի մեջ եղած խորունկ թվային հատակագծի միջոցով հաջողությամբ կարգավորված են:

Այդ ծրագրերը տեղեկություններ են հայտնում ժամանակագրական ճշգրիտ գրության մասին, որի մեջ սուրբգրային թվականները կատարելապես բաժանելի են 7-ի: Սա էլ մի ընդարձակ նյութ է: Մեծ հատորներ կարելի է գրել թվային իրողությունների և սուրբգրային ժամանակագրության առնչության շուրջ: Դա բացատրելու համար բազում էջեր են պետք: Այս գրքուկի նպատակը միայն մի փոքր գաղափար տալն է: Մեր խոսքն ավարտելուց առաջ անցածը կրկնենք:

Սբ. Գրքի սկզբնական բնագրի կազմության մեջ զարմանալի թվային իրողություններն ու ձևերն անջնջելի են: Դրանք Սբ. Գրքի բնագրի վրա այնպես են դրոշմված և նրա մեջ միմյանց հետ այնպես զարմանալիորեն են հյուսված, որ երկրի վրա ոչ մի ուժ չի կարող դրանք ջնջել կամ անջատել: Այս ծրագրերն ու ձևերը Աստծո խոսքին հյուսված են այնպես, ինչպես ձևերն ու գաղտնի պատկերները՝ թղթադրամին:

Սբ. Գրքի ստուգությունը կեղծիքներից տարբերելու համար այս ձևերը նրա էջերի մեջ այնպես են դրոշմված, ինչպես ստվերագծերը՝ թղթի մեջ: Այս թվային իրողությունները Սբ. Գիրքը պահպանում են սխալմունքներից ու կեղծումներից, ինչպես թղթադրամի և դրամատան փոխանկարագրային թղթի վրա եղած նուրբ գծագրությունները և նույնիսկ թղթի մեջ եղած ստվերագրությունը (որ անտեսանելի է հասարակ աչքի համար, բայց պահպանում է կեղծումներից): Արդարև, Աստված Իր խոսքի վրա հիանալի դրոշմներ է դրել, որոնք կրկնօրինակելը բացարձակապես անկարելի է:

Սբ. Գրքի բնագրում եղած բազում խորհրդավոր թվային ծրագրերը ոչ միայն գրողների կարողությունից, այլև նրանց գիտությունից վեր են: Նրանք չգիտեին, որ գրվածների մեջ այսքան հրաշալի նմուշներ, տիպեր, ձևեր և օրինակներ կան: Անշուշտ, նրանք Աստծո ճիշտ բառերը գրելու ժամանակ այն աստիճան կառավարվեցին նրա իմաստությամբ, որ բնավ չիմացան, որ յուրաքանչյուր տառ գրվում է մաթեմատիկական հաշվարկով: Սուրբ Հոգին էր, որ Իր Գրքի բառերի մեջ աննման օրինակներ և հրաշալի ծրագրեր էր ստեղծում, հյուսում և խորհրդավոր կերպով ծածկում: Երբ կարդում ենք սուրբգրային որևէ հատված, զգում ենք, որ գրողը որևէ ջանք կամ փորձ չի կատարել բառերի մեջ ձևեր դնելու համար, քանի որ խոսքերը միշտ բնական, շիտակ ու գեղեցիկ են:

ՈՒՐԻՇ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԹՎԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՏԻՊԵՐ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ

Մի քանի տարի առաջ Ամերիկայի Միացյալ Նահանգներում մի մտավորական գրքույկ էր գրել, որտեղ նշել էր, որ Իվան Պանինը կարող է նույնատիպ թվային երևույթներ գտնել որևէ մարդկային գրության մեջ: Շատերը շփոթված էին այս հայտարարությունից:

«Nobel Research Foundation» («Նոբել») հետազոտությունների հիմնադրամ) ընկերությունը, հրավիրելով եբրայերենի և հունարենի պրոֆեսոր Էդվին Էլիոթին, նրան առաջադրանք տվեց՝ քննելու Իվան Պանինի գյուտերը և տեսելու, թե նրա ասածները ստո՞ւյգ են: Ի՞նչ եղավ հետևանքը: Հիշյալ ընկերության ծանուցումը գրված է 1944թ. հոկտեմբերի «Պրոֆեսոր» թերթի մեջ, որը ներկայացնում ենք այստեղ.

«Nobel Research Foundation» («Նոբել») հետազոտությունների հիմնադրամ) ընկերությունը հետաքրքրվել է Իվան Պանինի գյուտերով: Նա վերստին քննել է նրա գրածները՝ տեսնելու համար, թե դրանք ստո՞ւյգ են արդյոք և ճի՞շտ է այն պնդումը, որ Սբ. Գիրքը աստվածային ներշնչումից բացի ուրիշ կերպ չէր կարող գրված լինել: Ընկերությունը ծանուցանում է, որ մեր քննությունները հաստատում են Իվան Պանինի ասածները: Նրա փաստերն ու ապացույցները զորավոր են:

Սբ. Գիրքն ի՞նչ է սովորեցնում. մենք նախապես դրանով չենք հետաքրքրվել: Մեր նշանաբանն էր՝ գտնել ապացույցներ, որայդ Գիրքը գրված է աստվածային ներշնչմամբ: Եթե սա հաստատվեր, ուրեմն Սբ. Գիրքն ինչ որ սովորեցնում է, պետք է ընդունվի իբրև բացարձակ ճշմարտություն:

Ահավասիկ մի քանի գյուտեր, որոնք երևան եկան մեր քննությունների արդյունքում. սրանք պրն. Պանինի՝ Սբ. Գրքի մեջ գտածների նմուշներն են:

Աստծուց բացի ո՞վ կարող էր խորհել՝ ճիշտ 153 բառերով նկարագրել մի քանի ձկնորսների գործը, որոնք ճիշտ 153 ձկներ որսացին: Հովհաննեսի ավետարանի վերջին գլխի առաջին 22 համարներում մեր գտածը հենց սա էր:

«Հիսուս» անվան թվային արժեքն է 888: Ո՞վ կարող էր գրել Հիսուս Քրիստոսի Հայտնություն գիրքը ճիշտ 888 բառերից կազմված բառապաշարով:

Այս բառապաշարի 888 բառերի մեջ 666-րդ բառը գազանի թիվն է: Ո՞վ կարող էր այսպիսի բան խորհել:

Նոր կտակարանը գրված է 8 տարբեր անհատների ձեռքով մոտավորապես 60 տարվա ընթացքում: Հայտնություն գիրքն ունի իր թվային կազմությունը, և Հովհաննեսի 3-րդ թղթի մեջ «Հիսուս» անունը գոյություն չունի. ինչպե՞ս եղավ, որ Նոր կտակարանը գրող 8 անձիք, ովքեր այդ 60 տարիների ընթացքում ապրել են Հռոմի և Բաբելոնի միջև տարբեր տեղերում, Սբ. Գրքի մյուս 25 գրքերում և թղթերում «Հիսուս» անունը ճիշտ 888 անգամ գործածեցին՝ ոչ ավելի, ոչ էլ պակաս:

Մի՞թե պատահական է, որ «Հիսուս» անվան 77-րդ գործածումը գտնում ենք ճիշտ այնտեղ, որտեղ Նա ասում է. «Չեմ ասում քեզ մինչև յոթ անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթ» (Մատթ. 18.22):

Սրանք մի քանի պարզ օրինակներ են, որոնք գրավեցին մեր ուշադրությունը: Պրն. Իվան Պանինի ցույց տված բոլոր զարմանալի երևույթները հրատարակելու համար բազում խոշոր հատորներ են պետք:

ԳԼՈՒԽ 2

ԻՎԱՆ ՊԱՆԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏԾՈՂ ՁԵՌՔԸ ՆՐԱ ԳՈՐԾԻ ՎՐԱ

Սբ. Գրքի սկզբնական բնագրի մակերեսի տակ պահված հազարավոր թվային իրողությունների գյուտը միայն մեկ անհատի ամբողջ կյանքի գործն է եղել, և այդ անհատը հռչակավոր ռուս գիտնական Իվան Պանինն է:

Սբ. Գրքի եբրայերեն և հունարեն բնագրերը կարդացող հազարավոր մարդկանց մեջ առաջինը նա էր, ով գտավ դրանց մակերեսի տակ պահված հիանալի թվային երևույթները, որոնք գիտականորեն հաստատում են, որ Սբ. Գրքի՝ պարզ մարդկային էակների կողմից գրված լինելն անկարելի է: Մեր առջև գերբնական, Աստծուց ներշնչված և աստվածատուր մի գիրք է:

Իր հիասքանչ թվային գյուտերի համար կես դարից ավելի ժրաջան և հոգնեցուցիչ աշխատանք թափելուց հետո այսօր արդեն 86-ամյա պրն. Պանինը ներկայացնում է իրողությունների մի շարք, որը զարմացնում է աշխարհին: Նրա աշխատության ձեռագրերը մոտավորապես 40.000 էջի են հասնում: Այդ էջերի վրա, որոնցից շատերը տարիների ընթացքում դեղնել են, պրն. Պանինը գրել է իր միլիոնավոր թվանշանները: Իր գործը կատարելության հասցնելու համար նա ստիպված էր 50 տարի շարունակ ամեն օր 12-18 ժամ աշխատել: Գտնելով հազարավոր թվային երևույթները՝ պրն. Պանինը մի ծառայություն արեց, որը տարբերվում է մյուս բոլոր մարդկանց գործերից: Հիրավի նրա գիրքը կարելի է դասել աշխարհի պատմության մեջ ամենամեծ և ամենահռչակավոր մարդկանց գործերի շարքին: Մի անհատ, ում կյանքի գործը եղել է այսքան աննման, արժանի է իր կենսագրականին նվիրված մի ամբողջ գիրք ունենալու:

Այստեղ միայն մի քանի էջեր ենք հատկացնում այդ անզուգական անձնավորության գործին:

Իվան Պանինը ծնվել է 1855թ. դեկտեմբերի 12-ին: Տարբեր տեղերում ուսում ստանալուց հետո նա հասնում է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և անմիջապես ընդունվում Հարվարդի համալսարան: Այնտեղ նա սերտ բարեկամություն է հաստատում պրոֆ. Վիլյամ Ջեյմսի և Հարվարդի նախագահ պրն. Էլիոթի հետ:

Իվան Պանինը փայլուն ուսանող և գրագիտության քննադատության ուսուցիչ էր: Զուլեջն ավարտելուց հետո նա դարձավ առաջնակարգ հրապարակախոս՝ գրական քննադատության գծով: Նա բանախոսություններ արեց Զարլայի, Էմերսոնի, Տոլստոյի և ռուս գրականության վերաբերյալ՝ յուրաքանչյուր բանախոսության համար ստանալով 200 դոլար: Նրա ճառերը կարդացվել են քոլեջներում և Միացյալ Նահանգների ու Կանադայի բազում քաղաքներում՝ գրական ակումբներում: Այս ընթացքում պրն. Պանինն աշխարհում հայտնի էր որպես անհավատ: Երբ նա հրաժարվեց իր անհավատությունից և քրիստոնեական հավատքին հարեց, դրա մասին լրագրերը խոշոր տառերով ծանուցեցին ամենուրեք: Պրոֆ. Ջեյմսը, որ ժամանակին ամենամեծ բնագանցագետն ու հոգեբանն էր, այսպիսի դիտողություն արեց. «Ինչ խղճալի է պրն. Պանինին կրոնով տարված տեսնելը: Նրա մեջ մի մեծ փիլիսոփա ավերվեց»:

Իր դարձի գալուց առաջ Իվան Պանինը 3000 առաձևեր և բազմաթիվ նշանավոր ճառեր գրեց՝ որպես գրական քննադատության ուսուցիչ: Նա նաև երկու օրաթերթի խմբագիր էր, տաղանդավոր գրող, փայլուն ու պերճախոս բեմասաց:

1890թ.-ին պրն. Պանինն առաջնորդվեց՝ ստանձնելու թվային ծրագրերի քննության գործը և Սբ. Գրքում գտավ առաջին թվային ծրագիրը: Սկսած 1890թ.-ից՝ նա իր ամբողջ կյանքը նվիրեց այս միակ նպատակին և կես դար շարունակ հավատարմությամբ և անխոնջ

հարատևությամբ աշխատեց: Այնքան ժամանակ հատկացրեց տառերի և բառերի հաշվարկին, թվային արժեքների հայտնաբերմանը, համաբարբառների ստեղծմանը և թվաբանական խնդրների լուծմանը, որ մի քանի անգամ իր առողջությունը կորցնելու կետին հասավ: Սակայն նա թույլ չտվեց, որ որևիցե բան արգելի իր կյանքի գործն ավարտին հասցնելու:

Մի անգամ Իվան Պանինը խիստ փորձության առջև կանգնեց. նրան հրավիրեցին՝ ստանձնելու քոլեջներից մեկի նախագահության պաշտոնը: Սակայն նա այդ հրավերը մերժեց՝ նախընտրելով իր կյանքը նվիրել թվային ծրագրերի հայտնաբերման և Սբ. Գրքի աստվածային ներշնչության ապացուցման գործին: Ուստի 1890 թ.-ից իր առօրյա հոգսերի համար սկսեց ապավինել միայն Աստծուն: Ոմանք զարմանք էին հայտնել, երբ իմացել էին, որ նա հրաժարվել էր իր փայլուն գործից, այսինքն՝ իբրև բանախոս, ամեն գիշեր 200 դույար վաստակելու հնարավորությունից՝ իր ժամանակը նվիրելով Սբ. Գրքի տառերը, թվերը, վանկերը և բառերը հաշվելուն:

Այս աննման անձնավորությունը ուսմունքի մեջ գերբնական կարողության և մեծ գիտության տեր մարդ էր: Նա, լինելով սրամիտ և աչալուրջ անձնավորություն, օժտված էր սքանչելի վերլուծման և գիտության տաղանդով, գերազանցորեն աչքաբաց և գիտակ էր, բնավ ոչինչ չէր անում ենթադրությամբ, այլ ամեն ինչ հիմնում էր քննությամբ և փորձով պարզված իրողությունների վրա, որոնք անհերքելի, անզուգական և ապացուցված էին: Նա իր ճանապարհը հետապնդում էր հանդարտությամբ և հաստատ էր իր գիտության մեջ՝ կատարելապես տիրապետելով թե՛ իր անձին, թե՛ այն իրողություններին, որ ուսումնասիրությունների արդյունքում գտավ:

Պրն. Պանինը եռանդուն և երկյուղած քրիստոնյա էր, Աստծո վերստին ծնված զավակը: Նա հաճելի անձնավորություն էր, ով իր սրտում բնակվող Քրիստոսի երկնային լույսն էր ճառագում: Այս զարգացած ազնվականը և իր գեղեցիկ տիկինը հանդարտ, պարզ և խոնարհ կյանք ապրեցին կանադական մի փոքր ագարակում՝ քաղաքի եռուզեռից հեռու:

Պրն. Պանինը պարկեշտ և պահպանողական մարդ էր: Նա նախընտրում էր կոչվել պարոն, ոչ թե դոկտոր, և դժկամանում էր հրապարակ հանել իր անձնական կյանքի պատմությունը: Նա նմանվում էր առաքյալներին, որոնք իրենց անձնական կյանքից ոչինչ չգրեցին, իսկ եթե գրեցին էլ, ապա շատ քիչ. նրանք Քրիստոսին բարձրացրին: Պրն. Պանինի՝ Միացյալ Նահանգների քաղաքացի լինելը պատահական էր:

ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱԼԻ ԳՈՐԾԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Իվան Պանինը Սբ. Գրքի կազմության մեջ գոյություն ունեցող հազարավոր թվային իրողությունների հայտնաբերման գործն սկսելուց առաջ ստիպված էր որոշակի պատրաստություններ տեսնել՝ պատրաստել համաբարբառներ, բառարաններ և Սբ. Գրքի ուրիշ վերլուծումներ, որոնք վերին աստիճանի ճշգրտություն էին պահանջում: Ամենափոքր սխալն արգելք էր հանդիսանում իր նպատակին հասնելու համար: Հունարեն Նոր կտակարանի համաբարբառը, որ նա պատրաստեց, 1000 էջանոց խոշոր գիրք է, որը պարունակում է Նոր կտակարանի բոլոր 137.903 հունարեն բառերը՝ այբբենական կարգով դասավորված: Այդ բառերից յուրաքանչյուրի տակ գրված են այն գլուխները և համարները, որտեղ դրանք գտնվում են: Անշուշտ, կան բառեր, որոնք հարյուրավոր անգամներ պատահում են Նոր կտակարանում, սակայն որտեղ էլ որ լինեն, այդ բոլոր բառերն ամփոփված են համաբարբառում: Հունարեն ամենալավ համաբարբառները բավականաչափ կատարյալ չէին, ոչ էլ բավականաչափ ճշգրիտ՝ պրն. Պանինի գործի համար: Ուստի պետք էր նոր համաբարբառ պատրաստել:

Պրն. Պանինը Նոր կտակարանի հունարեն բառերի բոլոր ձևերը ներկայացնող մեկ ուրիշ համաբարբառ էլ պատրաստեց, որը բաղկացած էր 2000 էջից, հիմնված էր առաջվա համաբարբառի հատակագծի վրա և կրկնապատիկ նյութեր էր պարունակում: Այս երկու

գրքերի ստեղծումը հեշտ գործ չէր: Դրանք ավարտին հասցնելու համար վեց տարվա հոգնեցուցիչ և տևական աշխատանք պահանջվեց: Սակայն սա դեռ ամենը չէր: Պրն. Պանինն առանձին գրքեր պատրաստեց հունարեն Նոր կտակարանի բառապաշարի բառերի համար, որը խիստ գիտական բառապաշար է: Նոր կտակարանի յուրաքանչյուր բառի համար թվային իրողությունների 16 սյունակներ կան: Ամեն բառից առաջ կան 4 սյունակներ, որոնց մեջ գրված են շարքի թիվը, տեղի թիվը, թվային արժեքը: Յուրաքանչյուր բառի առջև կան 12 սյունակներ, որոնց մեջ նշված է Նոր կտակարանում այդ բառի գործածության քանակը, ձևերի թվերը, վանկերը, տառերը, գրողները, գրքերը, երկբարբառները և այլն: Այս բառագիրքն ավարտին հասցնելու համար ավելի քան երկու տարվա անընդհատ և կորովալիք աշխատանք պահանջվեց: Պրն. Պանինն իր որոշ գործերի մեջ մի շարք բառեր կանաչ, կարմիր, կապույտ և ծիրանագույն թանաքով էր նշել: Յուրաքանչյուր գույն առանձին նշանակություն ուներ:

Այս ամբողջ գործը լոկ պատրաստություն էր՝ հազարավոր թվային երևույթների գյուտն սկսելուց առաջ: Երբ գործն սկսվեց, պրն. Պանինը 40.000 էջանոց կյութեր հավաքեց: Այդ էջերի վրա հաշիվներ արեց, թվային խնդիրներ կատարեց և թվային իրողություններ արձանագրեց: Նա ուշադրությամբ և աղոթքով փոքր և մաքուր միլիոնավոր թվանշաններ գրեց, որի համար մտային և մարմնական ահռելի աշխատանք թափեց:

Պետք է նկատել, որ Իվան Պանինն այս գործը շահի կամ աշխատավարձի համար հանձն չառավ, ոչ էլ գումար տվեց որևէ մեկին, որ գա և իրեն օգնի: Այդ երկար տարիների ընթացքում նա գրագրի և այլ աշխատողների կարիք ուներ՝ իր գործի տարբեր ճյուղերում իրեն օգնելու համար: Սակայն նա հասկացավ, որ այս տեսակ գործը մեկ ամսվա համար չէ. իրեն պետք են կամավորներ, Աստուծուց տրված նվիրումով աշխատողներ, այս դարի համար եռանդով լցված, ընդունակ և կարող երիտասարդներ, ոչ թե այնպիսի անձիք, ովքեր միայն աշխատավարձ են ուզում: Պրն. Պանինն աղոթում էր և հույս ուներ, որ գոնե մի քանի օգնական կունենա: Սակայն տեսավ, որ շատերը ժամանակ չունեին, ուրիշներն էլ շահագրգռված չէին: Այդ պատճառով իր գործը միայնակ առաջ տարավ: Նա երկար տարիներ աշխատեց՝ երբեմն տխուր և վշտահար, սակայն նրա գործն իզուր չեղավ: Ի վերջո, ամեն արգելք և դժվարություն հաղթահարվեց: Կես դարից ավելի ձգվող տաժանակիր աշխատանքից և անվեհեր հարատևությունից հետո նա տեսավ իր գործի կատարելությունը և այսօր, իբրև իր հավատարմության և քաջասրտության արդյունք, իրողությունների մի այնպիսի շարք է ներկայացնում աշխարհին, որ հիացնում է բոլորին:

Այս մեծ գործը միայնակ կատարելու փաստը պրն. Պանինի ժրաջանության ևս մեկ վկայություն է: Ներքո ստորագրյալս հարատևության և ժրաջանության մի ուրիշ օրինակ չգիտեր պատմության մեջ, որ կարողանար համեմատել այս մարդու և նրա 50 տարվա աշխատության հետ: Արդարև, այդ մարդը մտավորական հսկա և արտակարգ աշխատող է:

Ահա պրն. Պանինի կյանքի գործունեության ևս երկու նշանավոր արդյունք.

ա . Հունարեն թվային Նոր կտակարան,

բ. Անգլերեն թվային Նոր կտակարան:

Այս երկու գրքերն էլ արժանի են գովասանքի և շատ կարևոր ժառանգություն են գալիք սերունդների համար: «Հունարեն թվային Նոր կտակարանը» կատարյալ Նոր կտակարան է, որի մեջ լուսանցքում որևէ տեղ չէք տեսնի «կամ այսպես կարող է լինել» նշումով բառեր, որոնք տարբեր են բնագրից, քանի որ համարներն ամբողջ Սբ. Գրքում հայտնաբերված թվային իրողություններով հաստատված են: Վեստկոտի և Հորտի Նոր կտակարանի հունարեն բնագրի երկու տեսակ ընթերցումների բոլոր դժվարությունները մեկ առ մեկ քննված և լուծված են պրն. Պանինի կողմից: Այս կերպով նա կարողացել է ներկայացնել մաքուր և ճշգրիտ մի Նոր կտակարան, որ անառարկելիորեն նույնությամբ համապատասխանում է առաքյալների՝ Աստծո ներշնչումով գրված սկզբնական բնագրին: Այս հունարեն Նոր կտակարանը, որ լույս տեսավ նոր հայտնաբերված թվային

իրողությունների սկզբունքի հիման վրա, շատ կարևոր գործ է՝ իր 514 էջերով՝ տպագրված Օքսֆորդի համալսարանի տպարանում:

«Անգլերեն թվային Նոր կտակարանը» պրն. Պանինի՝ հունարենից անգլերեն թարգմանած Նոր կտակարանն է: Պրն. Պանինն այս թարգմանության մեջ իր լավագույնն է արել ոչ միայն մաքուր Նոր կտակարան ներկայացնելու, այլև, սերտորեն հետևելով հունարենին, նրա բառական իմաստը փոխանցելու համար: Այս Նոր կտակարանն անգլերեն տպագրված բոլոր Նոր կտակարաններից ամենաճշգրիտն ու կատարելագործվածն է: Սբ. Գրքի բոլոր ուսանողներին անպատճառ պետք է այս թարգմանությունը, եթե նրանք ուզում են հավատարիմ լինել իրենց գործին: Սա շատ գեղեցիկ թարգմանություն է, 610 էջից բաղկացած մաքուր գիրք, որը տպագրված է Կանադայի «Զլարք Էրվին» ընկերության կողմից Օքսֆորդի համալսարանի տպարանում:

Ոմանք անմտորեն փորձեր են արել՝ պարզելու, թե արդյո՞ք պրն. Պանինի գտած թվային երևույթները ճիշտ են, և այդ նպատակով վերցրել են անգլերեն թարգմանությունն ու ջանացել այդ թվային իրողությունները գտնել այնտեղ: Սակայն դա անկարելի է, որովհետև դրանք թարգմանությունների մեջ գոյություն չունեն:

Սրանից շատ տարիներ առաջ պրն. Պանինն իր գտած թվային իրողություններից շատերը, հատվածների բառապաշարները և ուրիշ մի շարք մանրամասնություններ ուղարկեց 10 նշանավոր մտավորականների, ովքեր բնապաշտներ էին, և նրանց հրավիրեց՝ հերքելու իրեն: Նա մարտահրավեր նետեց Հարվարդի և Չիկագոյի համալսարանների պրոֆեսորներին և ուրիշ շատերին՝ ուղղելով նրանց հետևյալ խոսքերը. «Պարոններ, կհաճե՞ք հերքել իմ իրողությունները և եզրակացությունները»:

Նրանցից մեկն ասել էր. «Ես չեմ հետաքրքրվում Ձեր թվային իրողություններով», երկուսը պատասխանել էին, թե իրենք ցավում են, որ դրա համար ժամանակ չունեն, իսկ մյուսները կամ նմանատիպ պատասխաններ էին տվել, կամ ոչինչ չէին պատասխանել:

Մի քանի տարի առաջ պրն. Պանինի թվային գյուտերից մի մաս «Sun» («Սան») թերթի կիրակնօրյա հատուկ համարի մեջ երևաց: Հետևյալ տողերն այդ հոդվածից են մեջբերված.

«Այժմ իմ փաստը հերքելու համար երեք ճանապարհ կա, միայն երեք ճանապարհ.

- (1) Ցույց տալ, որ երկու գրքերից յուրաքանչյուրը մյուսից հետո կարող էր գրված լինել: Այսինքն՝ ապացուցել, որ Նոր կտակարանի 27 գրքերից յուրաքանչյուրը իրեն հաջորդող գրքերից հետո կարող էր գրված լինել:
- (2) Ցույց տալ, որ իմ ներկայացրած իրողություններն իրողություններ չենկամ Ավֆան 1 թիվը չէ, Բետտան 2-ը չէ, Գամման 3-ը չէ կամ էլ իմ գումարները գումարներ չեն: Կարճ ասած՝ «Sun» («Սան») թերթի ընթերցողներին ներկայացված թվային իրողություններն պատրանք, կեղծիք, խարդախություն, շինծու բառեր և խղճալի նենգություններ են:
- (3) Ցույց տալ, որ թեև իմ իրողությունները ճշմարիտ են, թվաբանությունը՝ անսխալ, բայց մարդիկ կարող են գրել այս ձևով՝ չունենալով Աստծուց հատուկ ներշնչում:

Ոչ մի խելացի մարդ ջանք չի թափի՝ ինձ հերքելու առաջին ձևով, իսկ եթե մեկը ցանկանա ինձ հերքել երկրորդ ձևով, ես հարգանքով կհրավիրեմ նրան և շատերին, որպեսզի գան և ապացուցեն, որ իմ իրողություններն իրողություններ չեն»:

Իվան Պանինը մի շարք պրոֆեսորների, աստվածաբանների և քննադատների անուններ էր գրել, որոնց հրավիրել էր գալու և հերքելու իրեն: Նրանք կարող էին միություն կազմել այս նպատակի համար, եթե ցանկանային:

«Բոլոր նրանց, ովքեր Սբ. գրային կյուրթերի վերաբերյալ հոդվածներ տրամադրեցին «Բրիտանական հանրագիտարանի» 9-րդ տպագրությանը, թող միանան տասնյակ հուշագետներ, պրոֆեսոր Սայմոն Նյուքոմի պես կարող մարդիկ: Զննիչները որքան շատ և կարող լինեն, այնքան ավելի գոհացուցիչ է ինձ համար:

Նրանք պետք է տեսնեն, որ իմ իրողություններն իրողություններ են, այդ պատճառով ես պատրաստ եմ՝ ներկայացնելու դրանք ցանկացած երևելի փաստաբանների կամ ավելի բարձրագույն աստիճանների դատավորների: Թող ասեն, թե այս իրողությունները մեզ չեն ստիպում այսպիսի եզրակացության գալու, թե դրանք միայն ներշնչման արդյունք են:

Իմ ամբողջ խնդրվածքն է, որ նրանք այնպես քննեն այս խնդիրը, ինչպես դատավորն իրեն ներկայացված դատը. թող հրաժարվեն որևէ կյուրթ ընդունելուց, որ քննության համար հարմար չէ կամ ոչ գործնական է: Միայն թե, թող համբերությամբ քննեն երկու կողմին էլ, ինչպես ասվում է ցանկացած դատի ժամանակ»:

Ոչ մեկը փորձ չարեց՝ հերքելու պրն. Պանինի անուրանալի իրողություններն ու անխուսափելի եզրակացությունները:

Կործանիչ քննադատը ոչինչ չի կարող անել այս իրողությունները հերքելու համար: Իր ամբողջ անելիքը դրանք անտեսելն ու չիմանալն է:

Պրն. Պանինի օրինակները սխալ են: Եթե այդպես է, որտե՞ղ են սխալ: Եթե սխալ չեն, ուրեմն հետևություններն անվիճելի են: Մարդը չի կարող Մաթեմատիկոսի դեմ առարկել:

ԱՅՍ ԹՎԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՉՈՒ ԾԱԾՈՒԿ ՄԱՑԻՆ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՁԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Հավանաբար, մի պատճառ կա, թե ինչու խորհրդավոր կերպով թաքնված հազարավոր թվային իրողություններն այսքան դարեր ծածուկ մնացին: Այս իրողությունների գյուտը, անկասկած, արգելված էր մինչև մեր օրերը, քանի որ Աստծո Սուրբ Հոգին, որ այս ձևերն ու տիպերը հղացավ և տեղավորեց Սբ. Գրքի կազմի մեջ, նախատեսում էր, որ Սբ. Գրքի դեմ հարուցված ամենամեծ հարձակումները մեր դարում պիտի լինեն:

Ամենակատաղի և սուր հարձակումները, որ երբևէ եղել են Սբ. Գրքի դեմ, մի քանի տարի առաջ էին, երբ արդիականության և կործանիչ բարձրագույն քննադատության զորություններն իրենց խորամանկ ներքին գրոհն սկսեցին: Եկեղեցու ամբողջ պատմության մեջ բնավ չէր եղել մի ժամանակ, երբ Սբ. Գիրքն այսքան պառակտված և կտոր-կտոր եղած լիներ նրանց ձեռքով, ովքեր իրենց դավանում էին նրա պաշտոնյաները, ուսուցիչները և սիրողները: Մինչ այդ միայն անաստվածներն ու անհավատներն էին հանդգնում ծաղրել Սբ. Գիրքը: Սակայն վերջերս նվիրական ամբիոնների հետևում կանգնող արդիականները ծաղրում և դատապարտում են այն գիրքը, որը կանչված են ուսուցանելու, և այդ գործի համար էլ առատ թոշակներ են ստանում:

Այսօր «քրիստոնյա» կոչված անձիք հարձակումներ են անում Սբ. Գրքի դեմ, մինչդեռ այդ Գիրքը պետք է պաշտպանվեր ամեն մի անհատի կողմից, ով քրիստոնյա անունն է կրում: Եթե մարդիկ այդքան անհավատարմություն ցուցաբերեին աշխատանքի բնագավառում, իրենց պաշտոնից անմիջապես դուրս կվճռվեին: Բարձրագույն քննադատները և գիտական մտածողներ կոչվածները, քրիստոնեական քոլեջներում և հաստատություններում ամոթալի ձեռնարկումներ են անում Սբ. Գրքի դեմ՝ այն սխալներով, հակասություններով, մարդկային երևակայությամբ շինված կարծիքներով լի լուկ մարդկային գրողությունների մի պարզ հավաքածուի վերածելու համար: Սբ. Գրքի դեմ այս հարձակումը հենց եկեղեցուց է

գալիս և, իբրև հետևանք, եկեղեցու բազում անդամներ, խաբվելով, հին աստվածապաշտության տեղ արդիականությունն են տեղավորում: Սա քրիստոնեական հավատքի հիմքերի, այսինքն՝ Սբ. Գրքի աստվածային ներշնչության դեմ կատարված հարձակումն է՝ եկեղեցու պատմության մեջ ամենից խորամանկ և սաստիկ հարձակումը: Չարմանալի է տեսնել, թե ինչպես է Սբ. Գիրքն իրեն կործանելու միտումով կատարված այս ամենավերջին փորձին ևս փառավոր ձևով հաղթում, ինչպես հաղթեց անցյալում իր թշնամիների կողմից եղած բոլոր հարձակումներին:

Սբ. Գրքում եղած զարմանալի գիտական իրողությունները գաղտնի էին պահված՝ այս ճգնաժամում իբրև նոր հաղթական զենք ի հայտ բերելու նպատակով: Սուրբ Յոզիմ, որ այս թվային ձևերն ու տիպերը տեղադրեց իր Գրքում, սկզբից գիտեր, որ պիտի գար մի օր, երբ կործանիչ քննադատներն ու արդիականները պիտի վերցնեին իր Գիրքը և ջանք թափեին՝ այնտեղ գրված խոսքերն անհավատալի դարձնելու համար: Սուրբ Յոզիմ, անկասկած, գիտեր, որ մի օր ծրագրված անաստվածության և այլ հակառակությունների ուժերը, միացյալ ճակատ կազմելով, իրենց բոլոր խորամանկությունն ի սպաս պիտի դնեն Սբ. Գիրքը վերացնելու գործին: Ուստի աստվածային Նշանների այս շարքը տեղադրեց Սբ. Գրքում որպես նրա աստվածային ծագման անառարկելի փաստ: Սուրբ Յոզիմ դրանք խորհրդավոր կերպով ծածկեց և պահեց մինչև եկեղեցու պատմության մեր ժամանակները, երբ Սբ. Գրքի հանդեպ հավատը կորել է, և երբ այսպիսի ապացույցների ամենամեծ կարիքը կա:

Արդիականները և բարձրագույն քննադատները շատ տարիներ առաջ սկսեցին իրենց կործանարար գործը: Սակայն միայն այս վերջին 50 տարիներին էր, որ նրանց գործն արագորեն առաջ գնաց և խորապես զգացվեց ամեն տեղ: Չարմանալի չէ՞, որ ճիշտ նույն ժամանակ՝ 50 տարի առաջ, Սբ. Գրքի աստվածային թվային կազմվածքը հայտնաբերվեց: Չարմանալի չէ՞, որ Սբ. Գրքի թվային ձևերի գիտությունն այս դարում երևան եկավ: Չարմանալի չէ՞, որ ճիշտ այն ժամանակ, երբ կազմակերպված անաստվածությունը ծրագրեր էր պատրաստում Ռուսաստանը տապալելու և կառավարելու համար, Աստված բնիկ ռուս մի անհատի էր պատրաստում, որպեսզի հազարավոր թվային իրողություններ գտներ, որոնք գիտականորեն պիտի ապացուցեին Սբ. Գրքի գերբնական ծագումն ու նկարագիրը, իրողություններ, որոնք պիտի ջախջախեին անաստվածների, արդիականների և քննադատների բոլոր պատճառաբանությունները: Թերևս ոչ մի երկիր այնքան հակակրոն և հակասուրբգրային չէր եղել, որքան Ռուսաստանը: Նշանակալի չէ՞, որ Աստված հարմար է համարել ճիշտ նույն երկրից մի մարդ հանել, դարձի բերել և Սբ. Գրքի կազմում գոյություն ունեցող թվային ծրագրերը գտնելու համար հարկ եղած կարողություններով օժտել: Այս նոր գտնված անհերքելի իրողությունները, անտարակույս, Աստծո պատասխանն են անաստվածության, քննադատության և արդիականության խմբին:

ԳԼՈՒԽ Է

ԵՐԿՈՒ ԲԱՆ, ՈՐ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԸՆԹԵՐՑՈՂ ՊԵՏՔ Է ԻՍԱՆԱ ՈՒ ՀԻՇԻ

1. Գիտական ապացույցները համոզիչ են նրանց համար, ովքեր դրանք հոժարակամ ընդունում են:

2. Այս ապացույցներին պիտի հակառակվեն նրանք, ովքեր չեն ուզում տեսնել, և ովքեր որոշել են աչք փակել:

Մեկնաբանենք ասվածը.

1. Պրն. Պանինի սուրբգրային գերբնական ապացույցը հիմնված չէ պարզ վարկածների, տեսությունների կամ համոզիչ ոճերի վրա, այլ՝ հաստատ և դրական իրողությունների, որոնք ներկայացված են տրամաբանության անփոփոխելի օրենքների համեմատ: Եթե մեկն ուզի իր աչքերը բացել և տեղեկանալ այս իրողություններին, եթե հոժարությամբ լսի իր խելքին ու բանականությանը, ստիպված կլինի ընդունել, որ պրն. Պանինի իրողությունները, անտարակույս, ապացույց են Սբ. Գրքի՝ ոչ մարդկային, գերբնական և աստվածային ծագման:

2. Այսուամենայնիվ, այսքան զարմանալի գիտական փաստերի գոյությունը չի նշանակում, որ բոլոր անաստվածները, անհավատները, քննադատներն ու արդիականներն անպայման Սբ. Գիրքը պիտի ընդունեն իբրև աստվածատուր, բառ առ բառ Աստծուց ներշնչված Գիրք: Որովհետև «այս աշխարհի աստվածը (սատանան) այն անհավատների սրտերը կուրացրեց, որ Զրիստոսի փառավոր Ավետարանի լուսավորությունը չծագի նրանց վրա» (Բ Կորնթ. 4.4):

«Շնչավոր մարդը Աստծո Հոգու բաները չի ընդունում, որովհետև նրանք հիմարություն են նրա համար, և չի էլ կարող գիտենալ, որովհետև հոգևոր կերպով են քննվում» (Ա Կորնթ. 2.14):

Մեր Տերը նորից ասում է. «Եվ սա է դատապարտությունը, որ լույսը եկավ աշխարհ, և մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան թե լույսը, որովհետև նրանց գործերը չար էին» (Հովի. 3.19):

Ընթերցողները չպետք է զարմանան կամ վախենան, երբ տեսնեն այսպիսիներին, որոնք հակառակվում են այս գիտական ապացույցներին:

Սբ. Գիրքը չի սովորեցնում, որ բոլոր մարդիկ պիտի ընդունեն Աստծո Խոսքը և փրկվեն: Միշտ կան և պիտի լինեն այնպիսիները, որոնք չպիտի ուզեն տեսնել և հավատալ, որչափ էլ համոզիչ և տրամաբանական լինեն իրենց ներկայացված ապացույցները:

Պրն. Պանինն իրողություններ է ներկայացնում անհավատներին, սակայն դրանք տեսնելու աչքեր միայն Աստված կարող է տալ: Գիտական ապացույցները բնավ չեն կարող համոզել նրանց, ովքեր կամովին փակում են իրենց աչքերը ճշմարտության առջև և չեն ուզում տեսնել: Նրանց տեսնել չուզելը կամ չընդունելը չեն փոխում այս զարմանալի ապացույցները: Այդ անհերքելի իրողություններն անփոփոխելի են մնում Սբ. Գրքի կազմության մեջ: Չհավատացողների գաղափարները և դիրքորոշումը չեն կարող փոխել ճշմարտությունը:

Ընթերցողները չպետք է զարմանան կամ զարհուրեն, երբ տեսնեն, որ այսքան հիանալի գիտական ապացույցները քննադատության և հարձակման նյութ են դառնում: Աստվածային ներշնչության այս փաստին չհավատացողները չպիտի բավարարվեն այն տեսնել չուզելով, այլ պիտի ջանք անեն՝ ուրիշներին էլ դրդելու նրա դեմ: Փաստը գերազանցորեն կարևոր, քաջ և դրական է և սերտ հարաբերություն ունի մարդկային ամեն էակի հետ: Այսպիսի

փաստի դեմ հակառակությունն անկարելի է: Պետք է հիշել, որ կասկած և անհավատությունն սերմանելը սատանայի գործն է: Սատանան էր, որ ասաց մեր նախամորը. «Իրա՞վ Աստված ասաց...» (Ծննդ. 3.1): Սատանան միշտ հակառակվել է Աստծո յուրաքանչյուր ճշմարտության ծրագրին, խորհրդին և հարձակվել Նրա գործի վրա: Մենք պետք է պատրաստ լինենք՝ ճանաչելու սատանայի գործը և «Ամեն» ասելու Աստծո ճշմարտության խոսքին:

«Բոլոր Գիրքը Աստծո շունչն է» (Բ Տիմոթ. 3.16):

«Թող Աստված ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ՝ սուտ» (Հռոմ. 3.4):

ԻՆՉՈՒՒ Է ՏՐՎԱԾ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ, ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ՎԱՐԿԵՆՔ ՆՐԱ ՀԵՏ

Աստված ընկած և կորստի ճանապարհով քայլող մարդկությանը սիրեց և Իր Միածին Որդուն ուղարկեց, որպեսզի մեղավորների կուրացած աչքերը բացի և Իր Որդու մահվամբ նրանց ազատի գալու բարկությունից: Քրիստոսը Սուրբ Հոգին ուղարկեց, որպեսզի նրանց առաջնորդի՝ հավատալու Իրեն, փրկվելու և իրենց շնորհված Նոր կյանքն ընդունելու: Մեզ համար մեռնող Իր Միածին Որդուց և Երկնքից ուղարկված Սուրբ Հոգու պարզևից հետո Աստծո՝ ընդհանուր մարդկությանը տված ԱՄԵՆԱՄԵԾ ՊԱՐԳԵՎԸ ՍԲ. ԳԻՐՔԸ Է: Այս զարմանալի, թանկագին Գիրքն Աստված Իր անհուն շնորհքով և ողորմությունով է տվել և աշխարհում այսքան դարեր ի վեր պահպանել: Սա հասարակ գիրք չէ, այլ Կյանքի գիրք՝ յուրաքանչյուր անհատի համար: Եթե կարդում ես այս Գիրքը, հավատում և հնազանդվում նրա խոսքերին, խաղաղություն կունենաս և հավիտենական կյանքի ժառանգորդ կլինես, իսկ եթե անտեսում ես, չես կարդում, չես հավատում, չես հնազանդվում, մեղսալից ու անիծյալ կյանք ապրելով՝ կկորչես հավիտյանս հավիտենից: Ուրեմն ինչպիսի՞ն պետք է լինի մեր դիրքորոշումն այս Գրքի հանդեպ: Հետևյալ 24 համարները մեզ սովորեցնում են, թե ինչպես պետք է վերաբերվել Սբ. Գրքի հետ:

- (1) «Ձեր սրտի մեջ դրեք այն բոլոր խոսքերը, որ այսօր ձեզ իբրև վկայություն բերի, որպեսզի ձեր տղաներին պատվիրեք, որ այս օրենքի բոլոր խոսքերը պահեն ու կատարեն, քանի որ սա ձեզ համար դատարկ բան չէ, այլ ձեր կյանքն է...» (Երկր. Օր. 32.46,47):
- (2) «Սրա համար մենք էլ անդադար գոհանում ենք Աստծուց, որ մեզանից Աստծո խոսքը լսելով՝ ընդունեցիք, ոչ թե իբրև մարդկանց խոսք, այլ ինչպես ճշմարիտ է, որպես Աստծո խոսք, որ նաև ներգործում է ձեր մեջ, որին հավատում եք» (Ա Թեսաղ. 2.13):
- (3) «Չավելացնեք այն խոսքի վրա, որ ես ձեզ պատվիրում եմ և նրանից չպակասեցնեք, որ ձեր Տեր Աստծո պատվիրանները պահեք, որոնք ես ձեզ պատվիրում եմ» (Երկր. Օր. 4.2):
- (4) «Բայց սրանք ավելի ազնիվ էին, քան թե նրանք, որ Թեսաղոնիկեում էին, որոնք խոսքը ամբողջ հոժարությամբ ընդունեցին և ամեն օր գրքերը քննում էին, թե այս բաները այսպե՞ս են» (Գործք 17.11):
- (5) «Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի մեջ չի քայլում և մեղավորների ճանապարհի մեջ չի կանգնում և ծաղր անողների աթոռի վրա չի նստում, այլ նրա կամքը Տիրոջ օրենքի մեջ է և գիշեր ու ցերեկ նրա օրենքի վրա է մտածում» (Սաղմ. 1.1,2):
- (6) «Այս Օրինաց գիրքը քո բերանից չիեռանա, այլ գիշեր ու ցերեկ նրա վրա մտածես, որ պահես ու կատարես ամբողջ նրա միջի գրվածի պես, որովհետև այն ժամանակ

քո ճանապարհները հաջողակ կանես և այն ժամանակ խելամուտ կլինես» (Հեսու 1.8):

- (7) «Եվ այս խոսքերը, որ ես այսօր քեզ պատվիրեցի, քո սրտի մեջ լինեն: Եվ կրկնիր նրանք քո որդիներին, խոսիր նրանց մասին քո տան մեջ նստած ժամանակդ և ճանապարհ գնացած ժամանակդ և պառկելիս և վեր կենալիս» (Երկր. Օր. 6.6,7):
- (8) «Նա էլ (Հիսուսը) ասաց. «Այո՛, երանի՛ նրանց, որ Աստծո խոսքը լսում են և պահում»» (Ղուկ. 11.28):
- (9) «Սրա համար ամեն աղտեղություն և չարության առավելությունը դեն գցեք և խոնարհությամբ ընդունեք ձեր մեջ սերմված խոսքը, որ կարող է ձեր հոգիները ապրեցնել» (Հակոբ. 1.21):
- (10) «Վերստին ծնված լինելով ոչ թե ապականության սերմից, այլ անապական սերմից. Աստծո կենդանի և հավիտենական խոսքով» (Ա. Պետր. 1.23):
- (11) «Իմ նեղության մեջ այն է մխիթարությունս, որ Քո խոսքն ապրեցնում է ինձ...» (Սաղմ. 119.50-93):
- (12) «Նրա շրթունքների պատվիրաններից չեմ շեղվել. իմ կանոնից ավելի պահեցի Նրա բերանի խոսքերը» (Հոբ 23.12):
- (13) «Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լոյս՝ իմ ճանապարհի համար» (Սաղմ. 119.105):
- (14) «Տիրոջ օրենքը անարատ է, հանգստացնում է հոգին. Տիրոջ վկայությունը ճշմարիտ է, իմաստուն է անում պարզամիտին» (Սաղմ. 19.7):
- (15) «Նրանց սուրբ արա Քո ճշմարտությունով, Քո խոսքը ճշմարտություն է» (Հովհ. 17.17):
- (16) «Հավատքը լսելուց է, և լսելը՝ Աստծո խոսքից» (Հռոմ. 10.17):
- (17) «Երիտասարդն ինչո՞վ մաքրի իր ճանապարհը. Քո խոսքից զգուշանալով» (Սաղմ. 119.9):
- (18) «Մարդկանց գործերի նկատմամբ՝ քո շրթունքների խոսքի պես զգույշ եմ կենում բռնավոր ճանապարհներից» (Սաղմ. 17.4):
- (19) «Ուրեմն, դեն գցելով ամեն չարությունը և ամեն խաբեությունը և կեղծավորությունները և նախանձը և ամեն չարախոսությունը՝ Նորածին երեխաների պես ցանկացեք այն բանավոր ու անխարդախ կաթին, որ նրանով աճեք դեպի փրկությունը» (Ա Պետր. 2.1,2):
- (20) «Եվ հիմա ձեզ Աստծուն եմ հանձնում, եղբայրներ, և Նրա շնորհքի խոսքին, որ Նա կարող է շինել և բոլոր սրբվածների հետ ձեզ ժառանգություն տալ» (Գործք. 20.32):
- (21) «Եվ այն ամենն օրինակի համար էր նրանց հանդիպում, բայց մեզ խրատի համար գրվեց, որոնց դարերի վերջ հասավ» (Ա Կորնթ. 10.11):
- (22) «Իմ աչքերը մաշվեցին Քո խոսքին ցանկանալով. ես ասում եմ՝ ե՞րբ կմխիթարես ինձ» (Սաղմ. 119.82):

- (23) «Բոլոր գրքերը Աստծո շունչն են և օգտակար են սովորեցնելու, հանդիմանելու, շտկելու և արդարություն խրատելու համար» (Բ Տիմոթ. 3.16):
- (24) «Աբրահամն ասաց Նրան. Նրանք Մովսեսին և մարգարեներին ունեն, թող Նրանց լսեն» (Ղուկ. 16.29):

Վերոգրյալ սուրբգրային հատվածները մեզ ցույց են տալիս այն նպատակը, որի համար գրված է Սբ. Գիրքը, ինչպես նաև հասկացնում են այն դիրքորոշումը, որ պետք է ունենանք այս Գրքի հանդեպ: Մենք պարտավոր ենք սիրելու և մեր սրտի մեջ պահելու Նրա թանկագին խոսքերը, գիշեր ու ցերեկ Նրա մասին մտածելու և Նրա պատվերները զգուշությամբ կատարելու: Այս համարները մեզ սովորեցնում են, որ Աստծո խոսքերը մեր կյանքն են. առանց Նրանց՝ մենք բնավ կյանք չունենք, քանի որ Աստծո բերանից դուրս եկած խոսքերով ենք ապրում: Աստծո խոսքն է, որ մեզ վերստին ծնունդ է տալիս, երբ հավատքով լսում և ընդունում ենք: Այն մեզ կենդանացնում է, լուսավորում, մխիթարում, չարից պահպանում, իմաստուն դարձնում, սրբում, շինություն տալիս և մեծացնում մինչև փրկություն:

Տակավին ուրիշ անթիվ օրհնություններ էլ կան, որոնք կընդունենք, եթե խոնարհ սրտով և հավատքով կարդանք այս Գիրքը:

Ընթերցող, դու այսպե՛ս ես կարդում այս թանկագին Գիրքը: Զո կյանքում իրականացե՛լ է այն նպատակը, որի համար Աստված տվել է այս Գիրքը: Մեջբերված համարների տակ կարո՞ղ ես գրել անունդ և այդ ձևով վկայել, որ դրանք կատարվում են քո կյանքում:

Ասում են, թե մի անգամ մի անգլիացի բնագետ իր մանրադիտակը վերցնելով՝ Սկոտիո լեռներ գնաց՝ դիտելու այնտեղ աճող Երիկա ծաղկի բնական գեղեցկությունը:

Երբ հասավ այնտեղ, տեսավ, որ այդ ծաղկից ամեն տեղ աճում է: Նա պառկեց գետնին և մանրադիտակը հարմարեցնելով՝ սկսեց դիտել ծաղիկը: Որքան նայում էր, այնքան հափշտակվում ու հրապուրվում էր ծաղկի գույնով, անմասն կանոնավորվածությամբ և Նրբությամբ: Լինելով ծաղիկների սիրահար՝ բնագետը երկար ժամանակ այնտեղ մնաց, որովհետև չէր կարողանում բաժանվել այդ տեսարանից:

Երբ գետնի վրա պառկած դիտում էր ծաղիկը, հանկարծ մի շուք ընկավ մանրադիտակի վրա: Նա անմիջապես գլուխը բարձրացրեց՝ տեսնելու, թե որտեղից էր այդ շուքը: Տեսավ, որ մի հովիվ կանգնած էր իր կողքին և նայում էր, թե ինքն ինչ էր անում: Բնագետը ծաղիկը պոկեց և մանրադիտակի հետ տվեց հովվին, որպեսզի նա էլ տեսնի ծաղկի անմասն գեղեցկությունը:

Հովիվը սկսեց նայել և բավական ժամանակ նայելուց ու ծաղկի անմասն գեղեցկությունները տեսնելուց հետո սկսեց արտասվել: Նրա կեղտոտված այտերից արցունքի խոշոր կաթիլներ էին թափվում: Բնագետը զարմանում էր, թե հովիվն ինչու էր լալիս: Երբ ուզում էր հարցնել դրա մասին, հովիվը, վերադարձնելով մանրադիտակն ու ծաղիկը, ասաց. «Երանի՛ այս ծաղիկը բնավ ինձ ցույց տված չլինեիր: Իմ այս կոշտ ոտքերը քանի՛ անգամ են կանգնել Նրա վրա: Այսքան գեղեցիկ ծաղիկներն այդպես կոխկրտե՛լ... Ի՛նչ անպիտան մարդ եմ ես»:

Սիրելի՛ ընթերցող, այս գրքույկը գրված է Սբ. Գիրքը մանրադիտակով քննող և Նրա խոսքերի ու բառերի մեջ պահված հրաշալի երևույթներն ու գեղեցկությունները հայտնաբերող մեկի գյուտերը քեզ ներկայացնելու համար: Սրանք ի՛նչ ազդեցություն կգործեն քեզ վրա: Վերոհիշյալ հովիվ պես դու էլ արցունքներ չե՛ս թափի այսքան ընտիր, անմասն, նույնիսկ զարմանալի ու աստվածային խոսքերը զանցառությամբ, անհավատությամբ և անհնազանդությամբ ոտքերիդ տակ տրորելու համար: Թող այս գրքույկը միջոց լինի (Տիրոջ շնորհքով) քեզ համար՝ Սբ. Գիրքն ավելի հարգելու, սիրելու և Նրան ավելի փարվելու ու հնազանդվելու համար:

Նյութերի ցանկ

Գլուխ Ա – Սուրբ Գրքի բառային ներշնչումները հաստատող ապացույցներ կա՞ն:	3
Ա – Նոր զարմանալի հայտնագործություն:	
Բ – Երկու հատված «Նոր զարմանալի հայտնագործություններ» գրքից:	
Գ – Մի քանի կարևոր գիտելիքներ:	
Գլուխ Բ – Յոթ թիվը Սուրբ Գրքի, ինչպես նաև բնության մեջ:	7
Նոր զարմանալի հայտնագործությունների մի քանի օրինակ:	
Չարմանալի թվային երևույթները Սուրբ Գրքի մի շարք բառերում:	
Գլուխ Գ – Այս նոր հայտնաբերված իրողությունները գիտականորեն ապացուցում են, որ Սուրբ Գիրքը գերբնական, աստվածաշունչ և աստվածատուր գիրք է:	12
Գլուխ Դ – Նոր զարմանալի հայտնագործությունները, որոնց մասին խոսում ենք, ի՞նչ գործնական օգուտ ունեցան:	16
Գլուխ Ե – Վեց գերազանց կարևորություն ունեցող խնդիրներ, որոնք նոր հայտնաբերված իրողությունների միջոցով այժմ վերջնականապես լուծված են:	19
Ուրիշ զարմանալի թվային ծրագրեր ու տիպեր Սուրբ Գրքում:	
Գլուխ Չ – Իվան Պանինի աշխատանքը, հարատևությունը, ծառայությունը և Աստծո ձեռքը Նրա գործի վրա:	21
Նրա կյանքի հիանալի գործի տարածումը:	
Այս թվային իրողություններն ինչո՞ւ ծածուկ մնացին մինչև վերջին ժամանակները:	
Գլուխ Է – Երկու բան, որ յուրաքանչյուր ընթերցող պետք է իմանա ու հիշի:	
Ինչո՞ւ է տրված Սուրբ Գիրքը, և ինչպե՞ս պետք է վարվենք Նրա հետ:	27